



ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ

Ե. ՏԱՐԻ

ԶՈՎՏԵՄԲԵՐ 1903

ԹԻՖ 10

ԲԱՐԻՉ

« Իօսր » եւ « Լոյս » երկու համանուն բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտեալական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Ե՛մէ, հոգին չ'մարդ մտնէր, չ'ուսարդէր ինչ որ միտք կ'ըտէ, այդ չ'հասկցուած մէկն բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ճ. ՄԻՇԼԷ

ԲԻԶ ՕՐԷՆ ԼՈՅՍ ԿՐ ՆԵՍԵՆ

ԷՕՍԵՐ ԽԱՅԵԱՄԻ ՔԱՌԵԱԿՆԵՐԸ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ՊԱՐՍԿԵՐԷՆ ԲՆԱԳՐԷՆ

Գ. ՓԱՌՆԱԿ

Այս հատորը պիտի պարունակէ պարսիկ մեծ բանաստեղծին բոլոր քառական-
րուն թարգմանութիւնը եւ ընդարձակ ու հմտալից ուսումնասիրութիւն մը՝
թարգմանչէն՝ Խայեամի կեանքին ու գործին վրայ :

Գինն է .

Վերժէ թղթի վրայ	5 ֆրանք
Գուշէ — —	5 —
Հասարակ — —	3 —

Պ. Գ. Փանակ որոշած է իր այս հատորին վաճառման հասոյթին կէտը
նուիրել Ձէյթունի որբերուն համար բացուած հանգանակութեան եւ կէտը Պէ-
չիկթաչլեանի գործերուն հրատարակութեան :

Գինը ուղղոյնքը պէտք է գիմեն «Յնանիա»ի խմբագրութեան կամ մեր գոր-
ծակառարներուն :

ԼՈՅՍ ՏԵՍՍԻ

BIBLIOTHÈQUE ARMÉNIENNE. N. 1

CHANTS POPULAIRES

A R M É N I E N S

TRADUCTION FRANÇAISE AVEC UNE INTRODUCTION

PAR
ARCHAG TCHOBANIAN

PRÉFACE

DE
PAUL ADAM

LIBRAIRIE PAUL OLLENDORFF, PARIS, RUE DE LA CHAUSSEE D'ANTIN, 50

Գինը ուղղոյնքը պէտք է գիմեն ՕԼԵՆՏՈՐԲ գրալատնասանոցին

Գին 3 ֆր. 50

ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ

ԱԶԳԱՑԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Ե. ՏԱՐԻ

1903 ՀՈԿՏԵՄԲԵՐ


ԹԻԻ 10

ԷՋ ՄԸ ՄԻՍՍՈՒԹԵԱՆԷՆ



«Անահիտ»ի մէջ յաճախ յիշած ենք Միսաքեանի անունը իբր հայ գրականութեան մեծագոյն անուններէն մին: այդ հեղինակին գործերը հին լրագիրներու մէջ կորսուած կամ անգտանելի պորոյներէն մէջ թաղուած ու մասամբ ալ անտիպ մնացած ըլլալով, մեր հասարակութիւնը՝ մանաւանդ նոր սերունդը՝ գրեթէ ոչինչ կարգացած է իրմէ, եւ զայն կը ճանչնայ թերեւս միմիայն՝ Պարոնեանի «Ազգային Զոյներ»ուն մէջ՝ անոր նուիրած երգիծական կենդանագիրէն, որ սակայն՝ եթէ իբր երգիծանք փայլուն էջ մըն է՝ ոչ մէկ կերպով զազափար չի կրնար տալ այն գերազնիւ մտաքով, առողջ հմտութեամբ եւ ատիկեան ճշտակով գրագէտին վրայ որ եղած է Միսաքեան: Հայոց արդի գրականութեան վրայ խօսող յօդուածագիրները, մեր գրական մեծ գէտերուն շարքին մէջ չեն յիշեր Միսաքեանի անունը: Դեռ վերջերս «Բանբեր գրականութեան եւ արուեստի» հանդէսին մէկ աշխատակիցը (տաճկահայ բաղմամեայ հրատարակադիր մը), որ Արեւմտեան Հայոց նոր գրականութեան ամբողջական պատկեր մը ուզած է ներկայացնել, կ'ըսէր թէ այդ գրականութիւնը կը սկսի ճշմարտապէս «Արեւելք» լրագրին հիմնարկութենէն (1880) — ինչ որ անճիշդ է — եւ անկից առաջ քանի մը անուն միայն կը

յիշէ որոնց շարքին մէջ ու եւէ անդ չի տար Միսաքեանին: Մեր ընթերցողներէն շատերը մեզի երբեմն կը դիմեն ու կը հարցնեն թէ ինչի՞ վրայ հիմնուելով «Անահիտ»ի մէջ յաճախ կը յիշենք Միսաքեանի անունը իբր հայ մեծ գրագէտի մ'անունը: Ծանուցած էինք արդէն թէ մտադիր ենք Սվաճեանի մասին մեր ուսումնասիրութիւնն աւարտելէ յետոյ, Միսաքեանին ալ նուիրել մասնաւոր ուսումնասիրութիւն մը: Ատի սակայն պիտի ուշանայ զեռ երկայն ժամանակ: Այդ պատճառով՝ այսօր կը հրատարակենք Միսաքեանի ամենէն զեղեցիկ էջերէն մէկը, Քավուռի վրայ յօդուածաշարք մը, որ իր արտայայտած գաղափարներովն ու ձգտումներովը մեր այժմեան մտահոգութեանց համապատասխանսզ գրութիւն մըն է եւ այդ տեսակէտով ալ շահեկան պիտի ըլլայ մեր ընթերցողներուն, բաց ի գրական իր ամենարարձր արժանիքին ընծայած մշտական շահեկանութենէն: Կը կարծենք թէ այս էջին ընթերցումը բաւական է՝ ինքնին ճանչցնելու Միսաքեանի հոգին, նկարագիրն ու գրական զարգացումը եւ ապացուցանելու մեր իրեն նկատմամբ տաճած հիացման բացարձակ քանաւորութիւնը: Ա. Չ.



Ք Ս Վ Ո Ւ Ռ

Մարդիկ իրենց մէջն ըստ լիզուաց ջուկ ջուկ բաժնուած . իւրաքանչիւր ջուկ զինքն ազգ կ'անուանէ, եւ իւրաքանչիւր ազգի մանկունք ինքզինքնին իրենց ազգին միայն սեպհական անդամ ճանչնալով, օտարին ու իրենց մէջ տեղը կը խարեն . կրօնից խտրութիւնն ալ լեզուաց անջրպետութեանը վրայ յաւելնալով, երկուքը մէկէն մարդկային ազգին երկրաւոր շարեաց եւ ազեօնից կրկին ազբււրներն ու մեծագոյն պատճառներն եղած են, եւ : ըստ ժամանակին ու տեղոյն, մարդիկ իրարու դահճութեան ու մշտնջենաւոր ատելութեան կը մղեն :

Մարդկային ծննդակից ազխաութիւնն այս արիւնաբուզի աղբւրաց ազատ վազ եւ հոսանք տալով, վերջապէս մարդիկ, հասարակարար, իրար ատելու ակամայ սրամաղբեալ կամ թէ ըսենք, ստիպուած են : Լեզուաց եւ կրօնից այս խորանգունդ վիհերը, այս կարմրերանգ զիբերն, ազգ եւ ազինք իրարմէ բաժանած եւ շարաշար զանազանած տեղերնին, բա՛բէ, տակաւին անանկ մարդիկ կը ծնին, որ աշխարհ եկած ատեննին, անձանօթ՝ Յոյն կամ Իտալացի են օրինակ իմն, եւ մեռած ա. տեննին՝ ամենազգի եւ աշխարհաքսղաքացի կ'երթան :

Ասոնք իրենց արդեանց ներգործութեամբը՝ բովանդակ մարդկութեան սէրն ու համակրանքըն ստացած ըլլալով, այն անջրպետող վիերուն վրայ հեռզհեռէ մէյմէկ կամուրջ, եւ ազգաց մէջ մէյմէկ կապ կցորդութեան կ'ըլլան, ու իրարմէ օտարացած ժողովուրդները տակաւ տակաւ իրարու մերձեցունելով յնտելացունելով, տիեզերական միութեան ճարտարապետները կը համարուին : Ասոնք են, որ մեծ մարդ, հոյակապ անձինք, ծայրագոյն հանճար կամ ոգի կ'ըսուին, եւ մեռած ատեննին իրենց արդեանց ժառանգութեանն հետ՝ դառն կսկիծ եւ մորմոք կը ձգեն մարդկութեան :

Հայոց ազգին վերածնութեան ու բարգաւաճութեանը տենչացող կամ պարապող խոհականաց՝ որո՞ւ անձանօթ էր Քալուս կոմսին, Քալուս Իտալացւոյն գերապանծ անունը : Անիկայ, նոյն շնաշխարհիկ ոգիներուն մէկն

էր : որ մեր բարեբազոյ կենաց դարուն մէջ՝ ամենէն հաւե աշխարհք գալով, իր նախորդաց վեհագոյններուն հաւասարեցաւ : եւ սիրելի է ինձ ըսել, թէ նաեւ դերագանցեց : Ո՛հ, վերջիններուն դերագանցութիւնն առաջիններուն թշնամանք չէ, եւ Քալուս, իր նախորդներուն բերկրութիւն ու պարծանք ըլլալու չափ, գերազանցութիւն ցցուց քաղաքակրթեալ աշխարհին :

Օրագիրը ընթերցողներուն յայտնի է, որ եւրոպիոյ այս երկու շարթուան բոյոր լուրերը մէկի ամփոփեցան, կամ թէ բսենք, մեկուն քով ամենն ալ անհետ եղան, ինչպէս որ երկինք որոտացած ասեն, երկրաւոր շշուէններն անոր աշխարհաստատ գոռման մէջ կ'ընկնին կ'երթան :

Այս անակնկալ համբաւը, քաղաքական փրկի յաւէժայիշատակ մարդասիրի եւ մեծ քաղաքազէտի մը մահուան գոյժն էր, որ ազգայնութիւններն վերստանալու ոտնուորող ժողովրդոց վհատութիւն, ազատասէր եւրոպիոյ սուգ, եւ բովանդակ Արեւմտից՝ սասանումն եւ երկիւղ պատճառեց : Այս մեռնողը, անմահացեալ Քալուսն է :

Քալուս, Իտալիոյ նախասահմանեալ եւ վերջին ազատարարը, որ տար սարի Սարտինիայի ազգաժողովոյն մէջ յասնուվեց միլիոն Իտալացւոց ազատութեան, իրերասիրութեան, միութեան եւ զգօնութեան գաստիարակութիւնը յօրինեց, Քալուս, որ երկու տարի առաջ, գաղղիական անմահ գունդերուն նիզակակցութեամբը, իր հայրենեաց դաւաճան բռնակալները շանդահարեց, եւ Իտալիան, չքնաղ Յունաստանի գեղապանծ եւ բազմածին գուստորը, իր գերութենէն՝ իր շղթաներէն՝ իր անկմանէն եւ իր փոշիներուն տակէն հանեց կանգնեցուց ու վիքթոր էմմանուէլի հետ պսակեց, Քալուս, որ Իտալական թագր Լոմպարտայի, Թոսքանայի, Նէպոլտոյ, Սիկիլիայի, Փարմայի եւ Մոտենայի ազամանդներովը զարդարեց, նոյն կէտին, որ Ագրիական Մուլու փեսային գոհարն ու երկու Բրուտոսաց սուրբու երախակալաց չափիւղաներն անոր վրայ աւելցունելու հասած էր, իր սիրոյն, իր բերկրանաց, իր բազում ճգանց եւ անպարագիր վաստակոց տակ նուիրական մարմինն ընկճելով, աստուածեղէն հոգին զուարթութեամբ աւանդեց :

Մարդկային ազգին մէջ, ի սկզբանէ հեռէ,

եկած գացած ասանկ չնաչխարհիկ էից փոքրիկ թուռոյն նաչելով մարմնափոխութեան վարդապետութեանը հաւատալու կը փորձի մարդ և Արարչադորձ սիրոյն մշտնջենական մէկ ձայնը չն՞ն կ'ըսես, արդեօք ասոնք որ այսօր Նումայի, վաղը Պղատոնի, եւ միւս օր Արատոսի, երբեմն Սահակ Պարթեւի, եւ հետզհետէ Քիւնելոնի, Պրանքլինի եւ Քալուռի մարմին եւ դէմք առնելով կուգան մատուցանել կորստեալ ժողովրդոց տառապանացը դարման, վշտացն սփոփանք, մտացն սթափութիւն, ներկային փրկութիւն, ապագային յոյս, եւ իրենց առաքելութեանն համար աղագայ ոլորաներուն մէջ հերսպանձ վարսամներու նման մամանակ մը շողալէն ետեւ, աւելի կամ նուազ փութով կանցնին կերթան դարանակալ իմաստութեան ծոցը, մինչեւ ի նոր առաքելութիւն :

Այս վարսամներուն, կամ թէ ըսենք, այս կայծակիւր մարմնոց ամէնէն շուտ ետ դարձողը Քալուռն էր, որ իր սիրաւ մասնութիւնները, ցանկութիւնները բոլոր, եւ մէկ խօսքով բոլոր անձը հայրենաց սիրոյ բաղնիք վրայ դրած, ինք պատարագ եւ ինք քահանայ ինքզինքը զոհելով խարակելով ճենճերկով սպանեցաւ մոխիր դարձաւ, որ իր ածիւնէն թերեւս ուրիշ անուամբ ուրիշ Փիւնիկ մը յառնէ :

Մի՛ ստիպեր զիս, ա՛յ շողոքորթութիւն, գծնիկը կրակը երթալէն ետեւ շուշան անտանել, կնամարդին զիւցաղն, եւ առաքելութեանէ կամ արդիւնքէ զուրկ մեռնողն ալ՝ Յովսէփայ կամ Եպամիճոնի ամբանաւը պատանել : Ես, սկսած օրը վախճանին մօտեցած կեանք մը ունենալով, գեղեցիկն բարւոյն եւ ճշմարտին սիրահար եմ՝ ուստի սէրս ու գրիչս մարդկութեան բարձրացը ուխտելով պարտադանց մահուան ներքող չեմ կրնար հիւսել, միայն հողւոյն փրկութեանը համար մարդասիրտալէս կազօթեմ : Հեռու գնա՛ ուրիմն իզմէ, եւ թո՛ղ որ շնորհապարտ սրտէս բղխած արտասուքս Քալուռի սրբազան ածիւններուն նուիրելով, մոխրէն Հայոց ծնանելիք փիւնկան պալուստն հմայեմ :

Այս նուիրական դամբանին վրայ սաւառնելով սօսափող սօսեաց սաղարթներն ինչ կը շնչեն արդեօք իրենց բարեպարիշտ սառերին տակն հանգուցեալ մատուցը՝ որ Հայոց վերջին եզերաց վրայ հսկելու համար՝ Իտալիոնի գաղաթն էմմանուէրի մատանգութեանը մէջ

նորէն գրեցին, այն մատուցը՝ մէյ մըն ալ հաստատութեան ո՞ր կէտէն զուրս պիտի սլանան եւ Հայոց համար ինչ պիտի ուրուագրեն : Այս անգամ իրեւ Քալուռն եկող գացող աղագայ հրեշտակն՝ իրեւ ո՞վ իբրեւ ինչ, եւ ե՞րբ արդեօք պիտի գայ մեղի համար որ կենաց ու մահուան մէջ՝ կէս մեռել կէս կենդանի ծփալով անփորձ, անպէտ, անառաջնորդ եւ անապաւէն կը տատանինք կը դան դաչենք :

Բայց մինչեւ այն՝ ո՞ր Հայ, որ Իտալիոյ վերածնութեանէն ընդհանուր քաղաքակրթութեան, դիտութեանց ու արուեստից գալիք նոր զօրութիւնը կը տեսնայ, եւ իտալական հողմով՝ Աստղկան լերին վրայէն՝ Սիլիսական ավանց վրայ տեղալիք տարտիները՝ թափանցիկ ամպոց մէջէն գէթ ընդ աղօտ կը նշմարէ, ո՞ր այնպիսի Հայ՝ կ'ըսեմ, Քալուռի տարածամ մահուանը վրայ չարտասուեր :

Ինձի համար, Հոռմ իտալական պետութեան մայրաքաղաք ծանուցուած վայրկեանէն, քըրիստոնեայ Հայութեան կենաց հոյզը քամող ախտից մէկը պակսելու կը սկսի կրօնամոլութեան մահուամբը : Եւ ո՞վ կրնայ պնդել, որ վերջին հոմայեւոյն շիրմէն հին Հոռմը վերածնելէն ետեւ, երբոր իր նոր սահմանադրութեամբը խղճի սպատութիւնն հոչակէ եւ համարձակէ, երբոր աիեղերական զժտութեան նուիրեալ տաճարն աղդային նիւթական եկեղեցւոյ փոխուի, ո՞վ կրնայ պնդել, որ իր մօտէն մեր տերեւները կ'ըծող պարարտագոյն ջրեակները ընտելասէր ազաւնութեան չեն այլակերպիր, եւ բուսերնին կրօնամոլութեան մէջ բնտուելու անո՞ղ հայրենասիրութեան մէջ ճարակելով, Հայոց վնասակար ատելութեան ժանտ սերմն սպառնելու չեն զբաղիր մեր հայրենասիրաց հետ :

Բա՛րէ, Քալուռի մահն այս եւ այսպիսի յոյսեր ցրուե՞ց արդեօք : Բայց որովհետեւ արեւելից շատ յոյսերն Իտալիոյ միութեան ու ինքնիշխանութեանը կապուած են, ասկէ ետեւ Իտալացիք ինչ պիտի ըլլան, որ այլք ալ ակնկալին կամ անյուսանան :

Իտալացիք, որ 476 թուականէն ի վեր, անգաղար ձախողուածօց, ասպատակութեանց, արշաւանաց, պատերազմաց, հրոյ, սրոյ եւ հազար օտարաց ու բռնաւորաց ձեռք բռնի բռնի եղեր, տառապանաց մէջ կ'ապրէին, իրենց բազմադարեան աղէտներէն խրատուելով աչատութեան կարիքը ճանչցել էին : Բայց բռնաւորաց խնամքը մեջերնին հինցած ասելութեան

և Խառնութեան ազդեցութեանը տակն ընկ-
 ճած, միանալու սէրն ու ատկութիւնը կը
 պակսէր իրենց: Ըստ այսմ, 1848ին Գաղղիոյ
 ցնցմամբն ոտք կ'ընկնէր հայաձեցին բոնաւոր-
 ներնին: Բայց իւրաքանչիւր զքուստիւն կամ
 թագաւորութիւն՝ զատ զատ՝ իրենց անկա-
 խութիւնը ստանալու եւ պահպանելու միայն
 յոգնելով, մինչեւ որ իրենց բաղձապոմար
 թշնամեաց ձեռքէն ազատելու համար՝ իրենց
 միութեան հարկաւորութիւնը ճանչնալու եղան
 նէ, բռնաւորներն արդէն ներս մտնելու սկսեր
 եւ իրենց փախստեան ատենը՝ կեանքերնուն
 խնայող ժողովրդոց կոտորածին սկսէր էին:
 Այ՛ ճար չկար, լուծը յանձն առնելու էր:

Բայց Գալուստ, արդէն չատոնց իր հայրե-
 նեաց փրկութեամբ ընդաբձակ խորհուրդը երկ-
 նած ըլլալուն, անգոսարն 1847էն Ռեզուճարեկե-
 ղօ օրագիրը հիմնելով, միութեան գոհմ գասա
 խօսութիւնն սկսած էր Իտալացոց, եւ ազ-
 գին ախորժակն օրինակաւ կը թխելու համար,
 կարոյոս Ալպէրդին ձեռքէն զգօն աղատութեան
 սահմանադրութիւն մը առնել տալու աշխա-
 տեր եւ յաջողեր էր: Ուստի, Սարաէնիայի
 Մերակոյտին եւ Օրէնսգիր ժողովոյն երկու
 կացրդարանը լովանգակ Իտալիոյ քաղաքա-
 կան կը թուիւն զասարան պիտի ըլլային,
 եւ Գալուստ ալ անոնց ճակատագրեալ վե՛ն
 մանկածուն պիտի ըլլար:

Գալուստ իր ծագիկ հասակէն Սարաէնիայի
 մէջ հարկաւոր ուսմունքն ընելէն հետեւ, երկ-
 տասարդութեան ասինն ալ, երկար ժամանակ
 Լոնտրա եւ Բարիզ մնակելով, ազատութեան
 արգասիքն աչքովը տեսեր, ազգ մը կազմելու,
 հարստացնելու, բարգաւաճելու, եւ պետու-
 թիւն մը կառավարելու գիտութիւնն ու հրմ-
 տութիւնը բովանդակեր էր: Ուստի, այսչափ
 չուսով, այսչափ սիրով եւ յուսով իր երկրին
 կառավարութեան գործոց մէջ մտնելէն հետեւ,
 իր պերճախօսութեամբը, իր հանճարովն ու
 արդեանց վկայութեամբը ժիրաժիր յառաջ ըն-
 թանալով, Վիքթոր Էմմանուէլի ստուերին տա-
 կը պետութեան երաստանակն իր ձեռքն առնե-
 լու եւ ինքնիշխանաբար կառավարելու հա-
 սած էր:

Այս կէտին էր, որ Գալուստ Սարաէնիան Աւ-
 աստարդի արչաւանագը համոզելով, Անգլիոյ
 եւ Գաղղիոյ վարկն ստացուց իր կառավարու-
 թեանը եւ անով 1856ին Ամփիկտիոնը մտնա-
 լու նպատարը եւ իրաւունքը գտնալով, Սմիթիկ-

տիոնին մէջ Իտալիոյ դատը պաշտպանեց զօ-
 րեղապէս, Անգլիան, Գաղղիան ու Ռուսը իր
 դատին կողմը շահեցաւ, եւ իր մեծ տաղա-
 զրութեան գործը սկսու: Այս գործն յատկա-
 պէս Գաղղիոյ հետ նախ պաշտպանողական եւ
 վանողական նիղակակցութիւնն հաստատեց,
 նիղակակցութիւնն անխախտ պահելու համար,
 Վիքթոր Էմմանուէլի եւ Նարոլէոնի զերդաս-
 տանները խնամութեամբ իրարու կցորդեց:
 Այս ապառնովական՝ հախապատրաստութիւն-
 ներն ընելէն հետեւ, իր երկրին ազատութեանն
 օր ըստ օրէ՛ համարձակութեամբը՝ Աւստրիան
 զայրացունելով, ոտխին անժուժկալու-
 թեամբն անոր բռնակը Սարաէնիայի հու-
 գր քաչեց, եւ ան ատենը Եարոլէոն ալ իր
 ամենայաղթ ընդէնները վեց աւուր մէջ
 Ալպեան լեռներէն անցունելով Սարաե-
 նիայի արիագունդ մարկանցն աջակցու-
 թեամբն ընկրկեց խորտակեց Իտալիոյ միու-
 թեան անուոր թշնամին, եւ մանրիկ ընա-
 ւորներն ալ Իտալիոյ հողէն հալածեցան:

Սոյֆերինոյի պատերազմին մէջ՝ Գալուստ
 Իտալիոյ անարուեստ եւ անհաստատ հիմունքը
 քակեր, միացեալ Իտալիոյ հիմնարկութիւնն
 բրեր էր. անկէ հաքը կը սկսի կազմութիւնը:

13 Յունիս 1861

Գալուստի կարճատեւ կենաց վերջին տարը
 տարուան պատճութիւնը, Իտալիոյ պատմու-
 թեան մէկ զրուագն է. իսկ Իտալիոյ վերջին
 շարժման յեղափոխութեան, կերպարորութեան
 պատմութիւնն ալ, Պլուտարքոսի «Երեւելի
 արանց» պէս: Գալուստի կենացը վրայ հիմնուած
 է, եւ ատանց առաւելագանցութեան՝ առաջ
 հակառակութեան՝ Գալուստի իմացական կարո-
 զութեանց կենդանագիրն է:

Իտալիա երբեք նշանաւոր մարդոցմէ զուրկ
 օրեր չէ ունեցած: Իտալիա, Նարոլէոյ զրախաբը,
 միշտ իր անուանն արժանի մարդիկ հասու-
 ցեր է. անիկա Տանզէի, Միքէլ-Անճելոյի, Գա-
 լիլէոսի եւ Մաժժինիի նման մարդոց երկիրն է:
 Բայց Գալիլէոսի եւ Գալուստի պէս, երկիրը
 ցնցելով՝ կերպարանքն ու արգասիքը լուս-
 փունի փոխող մարդիկ, բոլոր երկրպունդիս
 վրայ միշտ հազուադի ա հղած են:

Իտալիա դեռ ասորուան օրս ալ, հինգ
 տասը հոգի ունի, որոնց յետրնն երկիրնքը

Հայոց չնորհած ըլլար նէ, Մեծիկա կը համարուէր մեզ, եւ որք Քաղաքի հսկայական ձեռնարկութեանը ստուար եւ գործակից եղան եւ գործը պիտի շարունակեն. բայց այս գործունեայ լուսուորները՝ Իտալիոյ քաղաքական արեղակնային դրութեան արբանեակներն էին պարզարար: Քաղաք արեղակնայէ միջակէտը կեցած, իր մասց ձողակն եւ վանողական գորութեամբը թագաւորաւը հանդերձ կը տարուբերը անոնք, եւ գործել ու ներգործել կուտար անոնց ըստ հարկին, ըստ տեղւոյն եւ ըստ համագամանաց ժամանակին:

« Մարտի 24էն մինչեւ ապրիլ 1ը, 4'ըսէ 24էն գաղթացի տարեգիրը, Քաղաքի բացակայութեանն տունը Իտալիա գրեթէ չնշարգել կեցած էր. վասնզի իր բոլըր ապագան իր առաջին քաղաքացւոյն այս ուղեւորութենէն ու նարդէն կայսեր հետ ընկիւթ խոսակցութենէն կախուած էր...: Երբոր ապրիլի առաջին օրը, առտուան ժամը հօթնին, Պ. Քաղաքի երկաթուղին իջնելով, գրեթէ Պ. Պ. Լամարտոնայ եւ Գաթիկանիոյ որ իրեն դիմաւորութեան դացած էին, բազկացը մէջ նետուեցաւ, Թուրինի բնակչաց մէկ մասն արգէն օտքի վրայ կը սպասէր եւ իր դասախօսին ու արտոյնանին դիմացը վրայ անձկութեամբ կարդալ կ'ուզէր Իտալիոյ ճակտին գիրը: »

Կաղթացի գրչաց մէկն այ, Պ. Մայսո, անցած օր, Քաղաքի հողեհանգստեան հանդէսին համար՝ Փարիզի Մաղաղակնացւոյ եկեղեցւոյն մէջ ու դուրսը խմբած անթուելի բազմութեանը վրայ խօսելով, Քաղաքի հողւոյն, առաքելութեան արդեանց եւ ճարտարութեանը իսկաբանչ նկարագրութիւնը կ'ընէր քանի մը տողով, որ, յիրաւի, զիւցապնին, ընդարձակատար պատմութեան բովանդակութիւնն է: « Ամէն սիրտ միեւնոյն զգացմունքն արծարծած, կ'ըսէ Պ. Մայսո, ամէն շրթունք միեւնոյն զգացմանց արտայայտութիւնը կ'ընէին: Այս զգացմունքն էր հիացութիւն եւ մորմնք այն հոյակապ անձին վրայ, որ ընդհանուր համոզմամբ գլուխ եզած էր մեծ ազգի մը, եւ նշանակ եւ բարբառ միութեան անդատին այն ատենէն, ուր զեւ միութիւնը մտաց երազ մը եւ տարտամ ցանկութիւն մըն էր: »

« Ուրիշ շատ մարդիկ «Իտալիոյ ազատութեան, ինքնիշխանութեանն ու միութեանը համար» աշխատեցան ու մարտնչեցան. բայց

ասոնց վրայ ազգաց յօժարութիւնն ու կատարութեանց ակնածութիւնն ստանալու զօրութիւնն ու պատիւը Պ. Քաղաքի միայն պահուած էր: Հարկաւորաբար, յեղափոխական ժողովրդեան մը կառավարութեան գլուխ կենալով, անոր պահպանողական կատարութեան մը կերպը, վարկը եւ ուժը սուաւ եւ բոպա սասնկ նորօրինակ եւ խիզախ քաղաքականութեան մը կախարդասար ցոյցքէն յախտակուած, եւ չգիտնալով թէ անդիմադրելի հեռեւութեամբ ազխադիտեալ անցից եւ զիւցաց հոսանացն առջին ինչպէս կտրելու է, վերջապէս ամէն պետութիւն, չկոք, կամ չարակամ կամ ոսոխ, Քաղաք կտմն կամացն անձնատուր եղան սքանչանալով: »

Քաղաքի անօրինակ հանճարոյն եւ գործոյն արժանապէս նուիրեալ ներքողները, առասպելական դարուց անհեթեթ դիւցազանց ճակատները պատող ճանանչներուն նշոյններէն չեն: Քաղաք գործովքն հանդերձ ներկայ սերնդեան աչքին առջեւէն անցաւ, եւ արարքը պատմողը Հերոզոսէս չէ, նուազողն ալ ոչ Հոմերոս եւ ոչ Պլինյարոս: Բոլոր ազատասէր Եւրոպիոյ եւ Ամերիկայի հանապազօրեայ թերթերը պարբերական տեսարներն ու տարեգրութիւններն են անոր գործքերը պատմողը երկու հարիւր միլիոնն ընթերցող, եւ շողին ու ելեքարականութիւնն ալ, առջի առաւր տպագրութեան թեթեւ վրիպակներն անդամ հոքի օրն անաչառապէս կ'ուղղագրեն: Եկո՛ւ այսչափ աչաց, ու շարութեանց, հսկողութեանց եւ ճշգրութեանց տակ Սուլթան Պայազիտը վանդակը դիր, կամ չունն եպիսկոպոսին հետ տոպրակը խօթէ՛ ու Քաղաքի անունը ժառանգէ՛:

Ո՛չ. Քաղաք բոլոր Եւրոպիոյ աչքին առջին արեւուն լուսովը գործեց: Ի՞նչ որ սասնկ թիւր բիւրոց աչուրներու առջին գործածներու աչք՝ չըսեմ թէ երկբայելի, այլ զարմանալի բան մը կար նէ՛ աս էր, որ գործած ասենը, անթերթ նայող աչուրներն անոր բրածը չէին տեսնար, լմացունելէն ետեւ կը տեսնային: Աստուածազդեցիկ վսեմական աճպարար, իր հայրենիքը մասնաւորող օտարախորթ բռնաւորները հալածեցունել տաջագրեր էր, եւ ազգ եւ ազինք իր զիտաւորութենէն կասկածելով, ընկիւթները տեսնալու համար չորս աչքով հանդիսատես կեցեր էին: Է՛յ ազէկ, Քաղաք ալ ահնուն առջեւ, նոյն իսկ նափոթոնի անգատիւր աչացն առջին, մէկ դուքս, մէկ արհիշուքս, մէկ

գըսուհի, մէկ պապական տեղակալ, միջին Իտալիոյ սկուտակին տակէն, անպարարի զնգականերուն նման, քանի մը առուր մէջ մէկիկ մէկիկ անյայտ ըրաւ հրաշագործ ձեռնածու թեամբ, եւ հանդիսասեսաց ամենէն խորագէտն ամենէն աւելի զարմացաւ :

Աշխարհի գիտցած բանն է որ Նաբոլէոն Իտալիոյ օգնութեան գացած ատենը՝ իր կամքն Աւստրիացին Իտալիայէն հալածել էր. բայց անոր հալածմամբն Իտալիան մէկ թագաւորութիւն ընել չէր : Անոր նպատակը, Իտալիան Աւստրիոյ լուծէն թափելէն ետեւ, Վենետական նահանգն ալ գըսութիւն մը ընել, եւ չորս գըսութեանց, երկու թագաւորութեանց ու պապական գերարքայութեանը մէջտեղն Իտալական դաշնակցութիւն մը հաստատել էր : Ասիկայ, Իտալիոյ վերակազմութեանը վրայ մտմտացող բոլոր պետութեանց, եւ մանաւանդ Գաղիոյ՝ մշտնջենական եւ միակ առաջագրութիւնն էր, Վասնզի Գաղիա թէպէտեւ այլոց պէս աշխարհի խաղաղութեան ու նոյն իսկ Իտալիոյ բարեւոյն համար Իտալացւոց ազատութիւնը կ'ուզէր, բայց իր գլխուն վերեւ քսանըվեց միլիոն մարդկամբ կազմուած հոծ եւ հաստահարուստ պետութիւն մը կանգնեցունել իր շահերուն դէմ էր :

Նաբոլէոն ալ այս խորհրդով եւ այս յօժարութեամբ միայն գացած էր Իտալիա . եւ արդէն նիզակակցաց զէնքն սկսեք էին մեծամեծ յաղթութիւններ տանիլ, երբոր Մաճենդայի յաղթութեան վերջը Նաբոլէոն տեսաւ, որ միջին Իտալիայէն դուքս գըսուհի բնականաբար երթալուն ետեւ, Ռոմանէզին ալ, պապական տեղակալը՝ աներեւոյթ մականի մը սքանչելագործ զօրութեամբ անյայտ է եղիր : Պատերազմի պատրաստութեան օրերէն սկսեալ Իտալիոյ ամէն կէտէն խուճախ խուճախ կամաւորներ Սարտենեայ զիմելու ելեր էին, եւ միջին Իտալիոյ իւրաքանչիւր մասնապետութեան մէջ ժողովրդեան կողմէն բանակ կազմելու եռանդ կար. ասոր Նաբոլէոն ինքն ալ բան չէր կրնար ըսել, վասն զի դաշնակցութիւն եղած ասանն ալ՝ Իտալացիք հասարակաց թշնամոյն դէմ այսպէս պիտի վարուէին, եւ զէպքն ալ զիրենք հասարակաց յաւերժական թշնամոյ մը դէմ արշաւելու ստիպած ըլլալուն, անոնք ալ պարտքերնին կը հասուցանէին հայրենեաց :

Նաբոլէոն Քալուռի սրտինը զիտէր, բայց այսչափ յամառութիւն, յանդգնութիւն եւ

արայութիւն չէր ակնկալեր : Ուստի միւս իշխանաց հետ պապին փոխանորդին ալ համբառնալն զգացածին պէս, նախարարին միտքը հասկնալով՝ սթափեցաւ կ'ըսէ փեթու չլլի, Իտալիոյ ազգային ժողովոյն ակնաւոր անդամներն մէկը, եւ Սոլֆերինոյի յաղթութեան հետ հաշտութիւնն ալ փութացուց :

Հաշտութեան պատճառն անշուշտ այս չէր միայն : Ամրոցաց պաշարման, որով եւ պատերազմին յերկարելու երկիւզը մէկ կողմէն, մէկ կողմէն ալ՝ սարած անագին յաղթութեանց նկատմամբ վախճանին վրայ եւրոպիոյ վարանիլը տեսնալով, Նաբոլէոն արդարեւ ցանկալի վիճակի մը մէջ չէր : Բայց պապական հողոյն ալ փոթորկիլը տեսնալէն հաւել, թէպէտ եւ անիշխանութեան չարեաց առջին աննկու համար՝ Վիքթոր Էմանուէլի խորհուրդ տուած էր, որ հոն ալ անիշխան մնացած տեղերն իր իշխանապետութեան տակն առնէ, այսու ամենայնիւ մեծ տագնապ մըն ալ այն կողմէն զինքը սլատած էր, վասն զի պապին իշխանութեան ամբողջ մնալու երաշխաւորութիւն տուած էր եւրոպիոյ :

Ինչ եւ իցէ, (վասնզի Նաբուլէոնի սրտին անդունդը դեռ մինչեւ ցայսօր խորաչափ չունի եւ յատակը տեսնող չկայ,) հարկաւ զլխաւոր պատճառ մըն ալ այն արկածքն ըլլալով, հաշտութիւնը վաղվազնց : Այն վայրկեանէն, խաղին մէջ կայսրը եւ Քալուռ մինակ մնացին գիմացի վիճաց, եւ Աստուած զիտէր թէ այս ամենահմուտ եւ անզուգական խաղարկուաց ո՞րը պիտի վաստկէր : Կայսրը, Վիքթոր Էմանուէլի կամակցութեամբը Վիլլաֆրանքայի հաշտութեան նախադրութիւնն ստորագրեց. Քալուռ իսկ եւ իսկ իր պաշտօնէն հրաժարեցաւ, որ դաշանց մէջ խօսք կամ ստորագրութիւն տուած չըլլալով, ապագային մէջ, ըստ պատենի, այն դաշինքն ու ստորագրութիւնները ցրելու ազատութիւնը պահէ իրեն, եւ ի բարեբաստութիւն Իտալիոյ՝ բա՛րէ, Քալուռ խաղը վաստկեցաւ, եւ ի՞նչպէս :

Նաբոլէոն կը կարծէր, որ ինք Աւստրիոյ խօսք տուած ըլլալուն համար, մասնապետութեանց իշխաններն անարդել տեղերնին կը դառնային. Քալուռ գիտէր որ անոնց ետ դառնալիքը չկար, նախ անոր համար որ իշխաններն ինքնին միւս մինակ պայուսակներն ուսերնին զարկած օտարական ուղեւորներու պէս ժողովրդոց զոները բաղխելու չպիտի երթա-

յին, որ ժողովուրդները զիրենք չհրաւրելէն զատ, հակառակը պիտի պահանջէին վաճառել՝ երկրորդ՝ ժողովուրդներն ի սկզբան անոնց ատաջարկեր էին, որ ազգային բանակներուն գլուխն անցնելով երթան Վերթիկը Էմանուէլի համազգային դրօշին տակ Աւստրիոյ դէմ պատերազմին: Իսկ անոնք, ի մեծ բերկրութիւն Քափուռի, իրենց կրօնատուածոյն դէմ մարտնչիլ յանձն չառնելով, աւստրիական զօրաց միջին Խաւրիոյ հոգերէն հեռացած ատենը, իրենք ալ իրենց փառագաները ձգելով զացել էին: Պապին տեղակալն իրեն համակիր եւ պահպանիչ սուրբներուն հետանալը տեսնելով երեք ժամ ետքը ինքն ալ կարգիներական արտախուրակը բարձին վրայէն արտօնօք բարձած, Պոլոնեայէն սակեր զացել էր: Փարմայի զբտուհին, զարն ամազունական կամ արանմիսական շրջալը դիտնալով, ժառանգ որդւոյն հետ անտուկ մը սփի առած, Չուիցերիոյ ազատ երկիրն անցել էր: Թոքսանայի արհիգոյքը, ժողովրդական ըզմիցը դէմ պայքարելէն ետեւ, խորտակեալ գաւազանէն ի շնորհս որդւոյն հրամարիլ յանձն չառնելով, արքունիքն ոսկեղէն եւ արծաթեղէն կաներէն եւ կազմուածքէն կապուեր: Աւստրիոյ բանակը զացել էր: Մոսկոնայի գուբը՝ պետութեան գանձուց մեծ մասին հետ խել մըն ալ զօրք առած, ան ալ զարձեալ թշնամւոյն օգնութեան զիմեր էր:

Յայտնի է որ ժողովուրդներէն ու աթոռներէն այս եղանակաւ մեկնող իշխանները, ժողովրդոց հաճութեամբն ու ազերսանօքը չէին կրնար ետ դառնալ, եւ բռնաւորներն ակամայ ընդունելու համար՝ ժողովրդոց վրայ զէնք գործածելու էր: Ո՞վ պիտի գործածէր այս զէնքը: Աւստրիացին չէր կրնար որովհետեւ անոր սղագեցութիւնը չբացնելու համար՝ ան իկա Խաւրիայէն արտաքսելու գացած էին: Իաղիացին ալ չէր կրնար, որովհետեւ ուրիշին ազգեցութեան վրայէն կարելու համար՝ օգնութեանը գացած ժողովրդեանը վրայ անմիջապէս ինք բռնանալ անվայել էր, ուստի եւ անկարելի: Իսկ եւրոպայ մէկ կողմէն ալ համաւերտական պատերազմ չըզգեցելու համար, Խաւրիոյ իրաց մէջ օտարի զինուոր միջնորդութեանը դէմ պիտի կենար:

Քափուռ ասոնց ամենուն քաջ խելամուտ ըլլալով, Սարտենեայի յարակցելու ետանդը

մտրակեց բոլոր այն վիճակաց մէջ, որ անիշխան եւ ազատ, Վերթիկը Էմանուէլի բացարձակ իշխանապետութեանը տակ պատապարած էին: Այս փորձութեանց ժամանակը Սարտենեայի նախարարութիւնը Վերթիկեանքայի զայանց եւ ժողովրդոց խստապահանջութեանց մէջտեղն անճար մնալով հրաժարականը տուաւ եւ Վերթիկեանքայի զաշնակցութեան անդոր, ծագրելի եւ անօգուտ ըլլալը հասկցուելով, Քափուռ եկաւ, կատարութեան սանձը ձեռքն առաւ: «Հարկ չկայ ճանչցունելու այս անձը, որ ատեն ատեն ախորժելի էր մարդոց Սարտենեայի Ռոպէն Փիլն անուանել, այս անձը, որուն նախարարութեան վերադառնալուն պատեհաւր, Էդրտ Փալմէրսթըն բովանդակ բարլամէնթին մէջ, Խաւրիոյ երեւելի անցից արձանագրութիւններն յաւիտեան զեզպարդող հայրենասիրաց չքնազագոյններէն մէկն անուանեց:»

Ղլլալիքներուն քիչ քիչ նարոյէտնի ալ խելիքը տեղ ըրած էր զարձեալ: Քաղիոյ ընդհանրութեան տիրող կարծիքն ալ, Խաւրիոյ բացարձակ միութիւնն էր, եւ նախդէտն այս կարծիքն արձամարելու արամադրութիւն չունէր: Ուստի, արդէն իր թելազրութեամբը Խաւրիոյ կազմութեանը նպաստաւոր տետրակ մը հրատարակուեր էր, Քափուռի վերադարձէն առաջ, որ մտքերը մեծապէս յուզած էր եւրոպիոյ մէջ: Ասկէ զատ, կայսրը պապին ալ թուղթ մը գրած էր, որով խորհուրդ կուտար անոր, որ արդէն ձեռքէն ելած երկիրները Վերթիկը Էմանուէլին փոխանորդական կատարութեանն յանձնէ, եւն: Քափուռ այս համբաւաւոր տետրակին ու թուղթին եւ միտանգամայն Անգլիոյ ու Քաղիոյ նոր համաձայնութեանցն յենելով, եւրոպական բոլոր պետութեանց բացատրեց, որ անիշխան ժողովրդոց անհանձն ջիլի արամադրութեանցը նկատմամբ, միացութեանէն զատ հնար չկար Խաւրիան խաղաղելու եւ բարեկարգութիւն հաստատելու: Եոյն միջոցին Անգլիոյ սատարութեամբ, զինեալ միջնորդութեան զէմ կայսեր միտքը կատարելապէս կաղզուրուելով, միջին Խաւրիան հիւսիսական մասին հետ արձակ համարձակ կցորդեց, եւ տասերկու միլիոնական պետութիւն մը յօրինեց, որ արդէն Բրուսիոյ պետութեան կը հաւասարէր:

Բայց անդին, Վենետական նահանգէն եւ հիւսիսական մնացորդներէն զատ տասը մի-

լիոն ժողովուրդ ալ կար, որ Ետնայի ու վեսու վի տակ Պուրպոնեան անպիտ թեան նշաւակ կը հեծէր. հարկ էր ան ալ ազատել, եւ ան ալ միութեան սանելով, վիքթոր Էմմանուէլի գրօշի տակ տասերկու քը քսաներկու միլիոն ընել : Ասիկա թերեւս աւելի զժուարութիւն ունէր :

27 յունիս, 1861

Իտալական պատերազմին սկզբնաւորութեան ասեմը, Նէպոլսի թագաւորը Ֆերաինանտոս, Աւստրիոյ չար հրեշտակին երկուրեակը, սասնըիններրորդ դարուն ալ առասպելախառն Փաղարիսը, Փաղղիոյ երկիւղիւն Աւստրիոյ կողմը չըռնեց, եւ Աւստրիոյ սիրովը խորովելով, Իտալիոյ եւ Աւստրիոյ մէջտեղը մնաց չեզոք, այսինքն, «ո՛ւղիս», չ'ոքո՛ւ ռք : Դուքսերուն փախստական գնացած սըը, Ֆերաինանտոս, իր հոգեվարութեան անկողնոց մէջ, իր քառասուն տարուան սկզբանց մուխի պէս Մաճինդայի ամպերն ի վեր ցնդիլը տեսնելով, սրտարեկ ձգեց գնաց անդէնը, որ այս վտարանդի մարտիրոս, նահատակ եւ վերջնավկայ բռնաւորներուն համար բարեխօս ըլլայ երկու Դիոնիսեանց ու Փաղարիսի, որ իրեն արժանի նախորդներն եղած էին, ինքն ալ անոնց արժանաբոյն յաջորդ վասնզի մարդկային կարճատեւ կենացը մէջ, անոնց երեքին միանգամայն կենաց գործոցը հաւասարելով, Սիկիլիոյ հողին սմէն մէկ կանգունը մէյմէկ մարդու արեամբ շաղխուած էր : Ինչ աննմանութիւն Քավուռի եւ ասոր մէջ, Հրէ՛ շ մարդկեղէն, մարդածուաղ եւ նախատինք մարդկութեան, որ իցի՛ւ թէ վերջինն ըլլար մարդկային պատուհասներուն :

Ես չեմ սիրեր նաեւ Քավուռ մըն ալ, որ նա՛ եւ հայրենեաց փրկութեանը համար, հակառակ կարծեաց անգէն մարդիկը խոչտանպէ, տանջէ եւ կտտամահ սպաննէ : Կորնչին ամէն հայրենիք եւ ամէն բռնաւոր հայրենասէրներ . որ հակառակ կարծիքն իմաստութեամբ համոզելու տեղը, կարծիքը ջնջելու համար՝ անգէն մարդիկ մահուամբ կը ջնջեն : Քավուռ ասանկ արիւնարբու հայրենասէրներէն եղած ըլլար նէ, Աստուած չընէր որ անոր պատմութեամբը բերան յոգնեցնէինք, կամ գրիչ մաշեցունէինք : Ասիկայ՝ հայրենեաց դէմ զէնք ա-

նողները զինու վանեց բայց լեզուաւ մարտընչող «Իր հայրենակցաց մէկուն ալ սուք չզգեցուց» : Ընդհակառակն իր դժնէադոյն սոսիւներն անգամ բանիւ համոզեց, եւ ձեռուընին իր հանձարովը եւ ոչ թէ չզթախու կապեց, թէ որ անկապելիներ ալ կային նէ, անոնք ալ, ինչպէս որ իր ոտխներուն վկայութեամբը պիտի հաստատեմ յետոյ, անկապ եւ ազատ թողուց, որ անգէն գործեն, եւ Խտալիտե՛ ասով աւելի շահեցաւ եւ զօրացաւ : Ֆերաինանտոսի անագան մահուանէն ետեւ, իրեն յաջարդեց իր սրբին Ֆրանչիսկոս որ դատակնքեալ դահուն հետ օրինապէս ժառանգած էր իր հօրն ու մօրը բոլոր կիրքերը : Մայր մը որ իր սիրտը եկեղեցւոյն կանթեղ ըրած էր, եւ հողին կտակ . բարեպաշտ . . . Աստուած ակամայ սխալանացս մեղք չհամարի, «Չերմեսանդ» ըսել կ'ուզէի Այո՛, ջերմեռանդ, ժամասէր, աղօթասէր, խոստովանասէր որչափ որ կ'ուզես բայց մարդասէ՛ր . ան ատենը ճամբայ դարձո՛ւ, որ ճակատդ եկ' ղեցուց պատին չզարնես : Ինչ որ եկեղեցական չէ կամ եկեղեցականաց սէր չունի, ան տիկնոջը սիրելի չէր, եւ թէ որ եկեղեցականաց սպարանօքն երկու Սիկիլեանց բանտերուն կամ տարագրութեան մէջ անթմանելով հեծողները մարդ էին նէ, ի՞նչ կ'ուզես, ան ալ իր էրկընէն աւելի մարդասէր չէր :

Այս մարդատեցութեան, արհամարհութեան ու անգթութեան հոգեով, Երեք կնիկ, իրենց գաւկին մարմինն ու արիւնը, սերտը, փորը, ցիլ, երակ, մայր, նեարդ, ուրդ եւ վտառ յցեր էին, եւ Ֆրանչիսկոս քառնամինի դահն կ'լած ատենը, Ներոն պատկերելով, սկսու ներոնարար անմիջապէս իր հայրը շարունակել բանտերը, զնդանները՝ առատաբար վաճառողի գրուանաց պէս զեղան թաթաղեցան : Նոր ասնջանաց նոր գործիք հնարեցան . բազմոցին վրայ, ամելիներ յետած՝ աթոռներ կերտեցան, որոնց վրայ կստկածաւորաց յետոյքը մերկ նստելով, բազմեալ մարմինները աթոռներուն տակը դրուած նորահրատ կրակներուն ջերմութեամբ պիտի ուռենային եւ արիւնները շարուանօրէն դուրս պիտի ցայտէին : Կանացի բնութիւնն ու ամօթոյքն ալ առնականէն աւելի պատկառանք ու ակնածութիւն չպիտի ազդէին այս դժոխազնեայ Ներոնի դահճացը : Երկրներուն փախուստը կամ թաքուստը յայտնելու համար Իտալիոյ գեղապայծառ արեւուն լու-

սովոր պարտաճ գեղադուարթ կանայք ալ, ուսնց զթու. թեան եւ ողորմութեան այս չարչարանաց հազորդ պիտի ըլլային: Այդ տառապելոց աղաղակներովն Եւրոպոյ աշխարհն հնչեցին, Աղբիոնի առեւծը Բալթերսթոն՝ բառլամենդի անձաւէն մոնչեց Պուրպոնեան գեոտհասակ վազեր դէմ: Իտալիոյ բարի հրեշտակին ձեռք Պուրպոնեան անիծապարտ տանն հիմանց տակը կտնայի եւ վետովի հրարոյ խնդրոյ բացուցան: Եւ ինչպէս վիքթոր Զիլիս գուշակած էր, «տարագրութեան սեւ ձիերն» այս քրիստոնեայ ներոնին, այս սօրստափառ կայէնին «դրանն առջիւ կը սպասէին»:

Ֆրանչիսկոս, ինչպէս որ վերն ըսուածներէն կ'իմացուի, միջին Իտալիոյ իշխանաց չուէլէն ետեւ թագաւորեց, դքսութեանց եւ պապական հոգերուն Սարոնեայի յարակցութիւնը տեսնելով, իր աշխարհաց սահմաններուն վրայ աչալուրջ հսկողութիւն, եւ մէջը նոյնչափ զգուշութիւն պիտի ընէր եւ ըրաւ: Ամբողջները, զգեակները, պարիսպները, սահմանազուխները զօրքով եւ ամրագինուք խոկեցան: Ներսն ալ, տեսչութիւնն Արգոտի հարիւր աչքը բազմապատկելով, գիշեր ցերեկ անքուն կ'ընէր, քաղաքացեաց դարչապարներուն տակ սրհաւիրք սերմանելով: Ֆրանչիսկոս իր անփորձութեամբն ու մարդ պատրանքը կարծեց թէ այսչափ զգուշութեանց, սպառազինութեանց ու արհաւրաց մէջ, Հերակլեան նախիրներէն կակոսի գողցած արջատներուն պէս ժողովուրդը բռնաորական անձաւներուն ներսի գին փակեց արգիլեց, անտես եւ անլուր ի մարդկանէ: Բայց յանկարծակի, բնոյն Սիկիլիոյ ստոյգ երինջներն, իտալական երկիրքը գոռացուցող բառաջ մը արձակելով, հոս ալ՝ «կակոսի յոյսը խափանեցաւ»:

Իտալիա, ազատութեան եւ միութեան գեղեցիկ մոլութեամբ բորբոքած, կը յուզէր, կ'եռար, երկու Սիկիլեանց բնակչաց ականջներէն այս խաղիչ ձայներն աննելով, բռնաւորին երկաթէ պաւազանին տակ կ'ոստնուին, կ'ընդոսանուէին: Աէրը գորսէն եւ բռնութիւնը ներսէն այս ժողովուրդներն այնչափ սխմեցին նեղեցին, որ օր մըն ալ, բարիլուսի ատեն, Սիկիլիա կղզին ցնցելով, Բալթերսթոն բնակիչները զէնք առին, ապստամբեցան: Ապստամբեցա՞ն: Ա՛հ, բառը ճիշդ է: Փողովուրդ մը ապստամբ է՝ երբոր արդար եւ անվրէպ օրինաց եւ իրա-

ւախնդիր իշխանութեան դէմ կ'ըմբոստնուան ատակութեան յօժարութեամբ: Իսկ եղեռնաւոր օրընաց եւ անձնահաճ իշխանութեան դէմ վրտարանջելը, ժողովրդեան մը ոչ միայն իրաւունքն է, այլ եւ պարտքն է, վասն զի, ինչպէս որ անձնասպանութիւնը ներելի չէ մարդու, նոյնպէս գինքն յուշիկ տանջող սպանիչներուն առաջին անտրտունչ կենալն ալ իրեն աններելի է: Մարդս իրեն աստուածապարգեւ կենաց տէրն է, եւ ընկերական օրէնքն ու իշխանութիւնն ալ, անոր պահպանութեանն հսկող խնամակալ: Երբոր խնամակալութիւնն այն սրբազան աւանդին կը զրժէ, իր սիրտն Աստուծոյ ձեռքէն դեւին ձեռքը կ'անցնի, որովհետեւ Աստուծոյ ձեռքը անանկ ապականեալ սրտերու կոյանաց չէ, եւ Սողոմոնի ծիծաղելի վճիռն այն ստրկամիտ վարձկաններուն միայն հաճելի կ'ըլլայ, որ «ապստամբութիւն, աղմուկ եւ խռովութիւն» բառերով հայհոյելու սովորած են գաղղիական վսեմ յեղափոխութեան: Բնական օրէնքն անոնց քարոզն ականջին ծայրով մտիկ կ'ընէ, մօրուքներնուն խնդալու համար:

Փողովուրդ մը ան ատեն լռելու է, երբոր իր վրան ծանրացած անօրէն ձեռքը խորտակելու բաւականութիւն չունի, եւ խորամարտ սրոյ ճարակ ըլլալու, էշ-նահատակ ըլլալու տարակոյսը չկայ: Բայց Սիկիլիա, հիւսիսային Իտալիոյ այցելութեանը վստահ ըլլալով, ընդվզեցաւ, վտարանջեց եւ ոչ թէ ապստամբեցաւ, ինչպէս որ Սողոմոնի նոխազներուն սովորութիւն է պապաջեր եւ ի՞նչպէս չվտարանջէին Սիկիլիացիք, անոնց ետեւէն ալ ցամաքայինք, երբոր իրենք ալ ազատեալ Իտալիոյ արիւնն ու անգամներն էին. երբոր անոր միութեան, փառացն ու մեծութեանը բնութեամբ բաժանորդ էին. երբոր օտարածին բռնաւոր մը, գլուխնին ափամէջը մուծանելով սրունքնին կապել կուտար, որ բերներնուն խօսք առնէր. երբոր վերջապէս, անդին ալ զրահաւոր արքայ մը, Իտալիոյ ասպարը բարձած Արիսեան գաչտին մէջ բովանդակ Իտալիան ազատութեան եւ միութեան կը հրաւիրէր:

Ինչ կ'ըսես ըսէ՝ Ֆրանչիսկոսի միտքն այս գաղափարներուն անառու, անգիտակ, անընտել, անհամարյր, ըստ որմէ եւ սպառու՞ էր ուստի Փալերմօ քաղաքը ոմբակոծել սուաւ: Տասնեկիններորդ դարուն մէջ երեւցած այս բարբարոսութեան դէմ, մէկէն գատ ամէն

պետութեանց հիւպատոսները միաձայն բողոքեցին, անպիտակ անհարգանքներն ալ սպառնացան, Փալերմոյի բնակչաց համար ազետալի էր արդարեւ ումբակոծութիւնը, բայց Յրանչիսկոս, կարծեալ ապստամբները զսպելու համար այս ձախորդ միջոցը գործադրելովը, թէ՛ ամբողջ Սիկիլիոյ եւ թէ՛ բոլոր Նէապոլսի սահմաններուն համար՝ առկէ աւելի մեծ բարեկամութիւն չէր կրնար ընել. վասնզի իտալական քաղաքի մը հարուածը Քալուսի համար հայրենակցաց պաշտպանութեան ուստի եւ նոր արշաւանաց մեծ պատճառ մը եղաւ, եւ հիւպատոսաց բողոքն ալ, իտալական իրաւանց հաստատութիւն եւ վկայութիւն համարեցաւ իրեն: Վասնորոյ առեւ մը ետքը, երբոր պագային ժողովը Սիկիլիոյ յուզմանց եւ արշաւանաց վրայօք կառավարութեան ընելիքը հարցնելու եղաւ նէ, Քալուս Պ. Քասինիի բերնովը ժողովոյն յայտնեց թէ կառավարութիւնն իտալիոյ աշխարհակալութեանը հետամուտ չէ, բայց իրենց ազատութեանն աշխատող իտալացի ժողովրդոց պաշտպանութենէն ալ չկրնար հրաժարիլ: Այս վկայութիւնը միան բաւական է, որ Սիկիլիոյ արշաւանքն առանց Քալուսի հաճութեանն ու օգնութեանն եղած չէ, եւ չէր կրնար ըլլալ:

Արդ, Փալերմոյի ումբակոծութեան վրայ, քաղաքացեոց մեծ մասը խուսելով, բոլոր Սիկիլիան անոնց օրինակաւն ոտք ելաւ. եւ ամէն կողմէ խուճեր հաւաքուելով, Յրանչիսկոսի զօրացն հետ ի բացի ոգորել սկսան, բայց անգլուխ էին: Ասոնց գործոց լուրն իրենց անդադար պաղատանացն հետ ազատեալ իտալիոյ ականջն հասնելով, ան ատենը Կապիլլոսի թողը, իտալիոյ Աքիլլէսը... Կարիպալտին է ըսածս, (անունը լսած ես, պատկերն ունիս նէ, ճիտդ կախէ՛, ճիղուիթները քովէդ հալածելու մէկ հատիկ համայիկ է), Կառիպալտի որ իր բոլոր կենացը մէջ, զէնքով եւ միամտութեամբ մարտնչած էր հայրենեաց փ կութեան համար եւ վերջին պատերազմին մէջ ալ իր կամաւորաց հետ մեծ յաղթութիւններ ըրած էր, այս պատեհին ընծայուած ատենն ալ, իտալական բանակին զօրապետութեան ու ազգային ժողովոյն իր հրաժարականը մատուցանելով, կամաւորներուն ձայն տուաւ, որ իր հետը Սիկիլիացեոց օգնութեան դիմեն, եւ ծովն իջաւ: Գաղղիոյ կառավարութեան ազդամբն ստիպեալ, «Ո՛ր կ'երթաս» կը պոռար ետեւէն

Քալուս, անանկ ձայնով մը որ աշխարհի լսելի էր. եւ քղանջքին տակէն գիւցազնին սրունքը կը խարազանէր որ շուտ երթայ. անոր ալ ուզածն աս էր:

Փալերմո քաղաքը պատնէչներով, զղնակներով, զօրանոցներով ամրացած ըլլալէ զատ, մէջը 25000 ալ սպառազէն զօրք պատրաստ կը հսկէին: Կարիպալտի, հազար երկու հարիւր մարտակցօք, Յրանչիսկոսի երեք նաւաց սուսքերուն մէջէն, ընդ հուր եւ ընդ սուր անցնելով, տասնըհինգ օր ետքը, նոյն Փալերմոյի մէջ բոլոր Սիկիլիոյ իշխանապետ կամ դիկտատոր հռչակուեցաւ, եւ յանուն Վիքթոր էմմանուէլի հրովարտակ հանել սկսաւ:

Փալերմոյի առմանը վրայ Յրանչիսկոս տազնապիլով, երկու Սիկիլիոյ զատ սահմանադրութիւն շնորհելու եւ Վիքթոր էմմանուէլի հետ դաշնագրութիւն ընելու զիջաւ: Բայց որովհետեւ Նէապոլսի Պուրպոններուն սահմանադրութիւնը «Ալի փաշայի» պարգեւ մըն էր, որ նեղութեան ստեղծ քանի մը անգամ երգմամբ ժողովրդեան տրուելէն ետեւ, երգմազանցութեամբ եւ արեւնհզութեամբ ետ առնուած էր միշտ, ուստի, այս անգամ ընծայուած սահմանադրութեան անբռնաբարելի մնալուն համար, Քալուս Յրանչիսկոսէ անանկ խիստ երաշխաւորութիւն պահանջեց, որ Յրանչիսկոս չէր կրնար յանձն առնուլ: Դարձեալ, Յրանչիսկոսի մատուցած դաշնագրութիւնը պաշտպանողական միայն ըլլալով, Քալուս միանգամայն պաշտպանողական եւ յարձակողական դաշնագրութիւն պահանջեց: Յրանչիսկոս ա՛ս ալ չէր կրնար յանձն առնուլ, վասնզի գիտէր, որ օր մը կրնար հիւսիսային իտալիոյ հետ Աւստրիոյ դէմ Վենետիկի վայ երթալու հրաւեր ընդունիլ: Այս հայնոյութեան Յրանչիսկոսի բարեպաշտութիւնն առաջուց զարհուրելով, մերժեց առաջարկութիւնը, եւ ան ատենը, Քալուս, Կարիպալտիի գործակալ Պ Պէտթանիի թող տուաւ որ ձենովայէն արձակ համարձակ Սիկիլիոյ համար երկրորդ արշաւանք մը տնօրինէ:

Կարիպալտի այս արշաւանքն ընդունած նոր զօրութեամբն աւելի զօրանալով, Փալերմոյի ներքին բարեկարգութիւնը բաւականապէս հաստատուէն ետեւ, Մեսինայի վրայ ցնաց եւ Պուրպոններն անկէ արտաքսելով բովանդակ Սիկիլիան ինքնատէր ըրաւ:

Ես երբայց առաջի ին , զորունս պղնձիս խորակեցից , եւ զառանգս աներեւոյրս բացից քեզ :

Սիրիւիոյ ազատութենէն ետքը , Կարիպալտի հարկաւոր զօրութեամբ նէպոլտոյ շողն անցաւ , եւ ճամբուն վրայ գիւղերէն քաղաքներէն արքունական զօրքն աւելելով հոսելով , օր մըն ալ , միայն քանի մը հոգւոյ ընկերութեամբ մայրաքաղաք մտաւ , ուրիշ շարաքաղք երիտասարդն իր առջեւէն հալածական գացեր էր , եւ ուրուն գոննն ու ժողովրդեան բաշտակներն իր առջին բաց կեցած , իր գալստեան լը սպասէին :

Ֆրանչիսկոս . նէպոլտէն հետը տարած զօրքովը Կապուայ ամուր քաղաքն աւելի եւս ամբարցնելով , Կայէթա գացեր պատսպարուեր էր , որ նոր պատմութեան մէջ «անառիկ» անունը յառանգած էր : Իր փրկութեան եւ վերադարձի յոյսը բոլոր բովանդակ Կապուայի ետին այս անառիկ ապաստանարանին մէջ կը պարուրէր եւ թէ որ Գալուսի վսեմախոհ հոգին , նանբարխորհուրդ ասմկայուզից զրգամբն իրեն դէմ միամտաբար ապաշնորհ գտնուող բարեմիտ զօրապետն օգնութեան շնանէր նէ , Կարիպալտի կ'ընկճէր եւ Ֆրանչիսկոսի յոյսն ալ թերեւս բոլորովին ի գերեւ չէր ելլար :

Լամոսիսէն , Գալուսի մեծանուն զօրավարը որ ազատութեան նաեւ հասարակապետութեան ալ ծառայեր , եւ հասարակապետութիւնը խարդաւառովին դէմ բողոքելով՝ գացեր , օտար երկիրներու մէջ ազատութեան սիրովն իր օրերը կ'անցունէր , այս ժամանակներն՝ յանկարծ ինքզինքն իր բարձրութենէն գահավիժելով , ազատութիւնն ուսուցեր , սարկութիւնն ընտրեր եւ գացեր իր սուրը Պապին կորուսեալ գառին գրաւ գրեր էր :

Պապն իր ձեռքը մնացած հողերը իտալացւոց երեսէն պատսպարելու համար՝ Գալուսացւոց բանակաւը շատանալով , իրեն յատուկ բանակ մը կազմել կ'ուզէր , եւ Լամոսիսէն այս անպէտ եւ աւելորդ բանակին զօրապետ , կամ թէ ըսենք , խրատելիակ ընտրուեցաւ : Եւ որովհետեւ իտալիոյ դէմ զինեալ ասանկ վասանուն բանակի մը գրուող վատ իտալացի չկար բաւական , Լամոսիսէն , Գերմանիայէն , Պելճիքայէն , Գալլիայէն , ու Իրլանտայէն եկող կաթոլիկ կամաւորները զուխը ժողովց , որոց մեծագոյն մասը բնականաբար զօրապետին ըսածը չէին հասկնար , եւ այս շարժական Բարեւոնը կառուցած սեղը , իր անունէն մեծ , իր սուրէն

ալ մեծ , եւ զինքն ընտրողին գլխէն ալ շատ մեծ յայտարարութիւն մը հանեց բոլոր աշխարհի : Ես , թէ «Յեղափոխութիւնը հին մահմետականութեան պէս աշխարհք եւ կրօնք ճարակելու երես բոնած է . պէտք է որ ես անիկայ հեղձուցանեմ եւ կրօնքը պատսպարեմ ու ապահովեմ : Ամէն» : Ասիկա , բոլոր իտալիոյ առհասարակ , եւ մասնաւորաբար Նաբոլէոն կայսեր սպանալիք մըն էր : Լամոսիսէն միտքը գրած էր , որ իտալիան խորտակելէն ետեւ , պիտի գար Նաբոլէոնն ալ Գալլիայէն հալածել , եւ այս սպանալիքն , բոլոր ատենը , իր աղիսագուր բանակը կը բաղկանար . . . դուշակէ՛ նայինք քանի՞ հոգիէ : Տասնութհազար ողորմելի թշուառականէ :

Այս բանակն արդարեւ զօրապետին առաջագրութիւնն անոր երազին մէջ ալ կատարել տալու բաւական չէր , բայց ինք իր զըլխուն թողու էր նէ , սողին Կարիպալտին դէմ գործ պիտի տեսնար : Կարիպալտի Ֆրանչիսկոսի ետեւէն Կապուա գացեր էր : Լամոսիսէն ալ Հոսմայ սահմանները պատսպարելու համար առաջ կը քայէր , Ֆրանչիսկոս Կապուայի եւ Կայէթայի մէջ ութսուն հազար զօրք ունէր : Լամոսիսէնի եւ Ֆրանչիսկոսի զօրքը՝ Կարիպալտի բանակը՝ Վուլթոնի վրայ երկու կրակի մէջ ղոնելով , անտարակոյս պիտի ջընջէին : Ափիլէսի ընելիքը չկար հոս . այս բանակները խորտակելու համար , Պալլաս պէտք էր , եւ յարձակուին աշխարհի առջեւ արդարացնելու համար ալ՝ Աթենաս պէտք էր :

Գալուս ան ատենն Արամազդայ ուղիղէն անգամ մըն ալ դուրս ելլալով , Հոսմայ կառավարութեան պատգամ զրկեց , որ վարձկան օտարականներուն բանակը լուծէ , եւ իտալիոյ չոզէն դուրս հանէ : Հոսմայ կառավարութիւնն այս իտալական առաջարկութիւնը մերմելով , իտալիոյ դէմ պատերազմ հրատարակած սեպտեմբր , այն ժամանակ Գալուս Ֆանթի եւ Չիալտինի զօրապետներուն հրաման զրկեց , որ Հոսմայ սահմանն անցնին , այն բանակը ցրուեն :

Ֆանթի գնաց Փերուզն առաւ , եւ Գերմանացի զօրքը զօրապետին հանդերձ կենդանուոյն ձերբակալ ըրաւ : Չիալտինի առաջին բաղիմամբը Լամոսիսէնի բանակը ցիրուցան ըրաւ , եւ փախստական զօրապետին ետեւէն մինչեւ Անքոնա երթալով , ստիպեց Ֆրանսիս ծովապետին անձնատուր ըլլալ : Լամոսիսէն ,

այս պատեհաւ, Անքոնայի եւ Փերուզի հետ րովանդակ Մարչից եւ Ուպրիոյ գաւառներն ալ Պապին կորսնցնել տալէն ետեւ, ինքզինք ալ վրայ տալով իր կանխասաց մեծաբանութիւններովն հանդերձ առակ եղաւ աշխարհի:

Հոսմայ հողն աստնկով Իտալիոյ թշնամի խառնախորե ամբօսէ մը մաքրելէն ետեւ, Քավուռ առաջարկեց Վիքթոր Էմմանուէլի, որ բանակին գլուխն անցնելով Նէպոլսոյ հողը մտնայ, եւ իրեն անձնանւէր ժողովրդեան նուիրէ ինքզինքը: Այս վայրկեանն երկու Սիկիլիոյ յարակցութիւնը՝ ժողովրդեան վարկով վճռուած էր, եւ Կարիպալտի Սարաենայի բանակին օգնութեամբը Կապուա քաղաքը Պրանչիսկոսի ձեռքէն առնելէն ետքը իր դիկտատորական իշխանութիւնը Վիքթոր Էմմանուէլի ձեռքն աւանդելով, բանակէն հրաժարեցաւ, եւ կամայ ակամայ ասպարէզը թողուց Քավուռի, որ գիտցածին պէս ընէ: Կարիպալտի իր իշխանապետութեանն ատենը Կայթթայի համար ծովային պաշարուն հրատարակած էր, աւագ պետութիւններն անիկայ մերժեր էին, եւ գաղղիական մասնատորմիդ մը Կայթթայի առջին Պրանչիսկոսի անձին պաշտպանութեանը համար կեցած ըլլալով, իտալական տորմիդը չէր իշխեր քաղաքը ծովէն ծածել, Պրանչիսկոս ալ համարձակաբար ամէն օգնութիւն կը հայթայթէր դուրսէն: Քավուռ քաղաքը ցամաքէն խտրել պաշարել տալէն ետեւ, ինչ ըրաւ չըրաւ, Գաղղիացոց նաւերը նախդէնին հեռացնել տուաւ անկէ, եւ քաղաքն իտալական նաւատորմիդին ու բանակին միանգամայն ծովէն ու ցամաքէն ուժաւորեց տալով, Իտալիոյ միութեան ներքին եւ գրեթէ վերջին հզօրագոյն թշնամին ալ անկէ հալածցուց, առանց Եւրոպայի ձայն հանել տալու:

Այն օրը, իրապէս, Վիքթոր Էմմանուէլի անուանը տակ՝ 12 միլիոնը 22 եզաւ, եւ 22 միլիոն Իտալացի, անսացողութեամբ, զգօնութեամբ, հանդարտութեամբ միանալով՝ ակնածելի պետութիւն մը կազմեցին Եւրոպիոյ կեդրոնը, եւ Քավուռի մեծագործութեանն, անուանն ու փառաց անեղ յիշատակարանն եղան. անկէ ետքը ի՞նչ մնացեր էր 22 միլիոնը 26 ընելու, որ Իտալացուց ազգն ու պետութիւնը բովանդակապէս լիանար, բոլորէր, ամբողջանար, եւ ժայր երկիրը դուրսն ողբալու զաւակ չունենար: Վենետական գաւառները

ազատել եւ Հոսմ Իտալիոյ մայրաքաղաքն ընել, Հոսմ Մենտոր 26 միլիոն Տելեմար յանկարծ իրենց անձին ձգելով, վերացաւ սօնց գլխէն, որ իր ցցուցած ճամբէն ինքնին որ թալով մնացողն իրենց աշխատութեամբը լրացնեն, որպէսզի դժուարութիւնները տեսնալով, մինչեւ այն ատեն դժուարութեամբ ստացածներուն գինն ու յարգը ազէկ ճանչնան եւ կորսնցունելու վտանգի մէջ չիջնան: Հոս Մովսէս, Աւետեաց երկրին սահմանաժայրից մերձ հանդեաւ, հոյլ մը Յեսուներու յանձնելով սահմանին անցքն ու ժողովրդեան առաջնորդութիւնը:

Իտալացիք զգացին անոր մաշուածն ունեցած անազին կորուստնին, եւ աւելի իրար մօտենալով, աւելի սերտացան եւ աւելի զգոնացան: Ասոր կենդանութեան ատենը՝ խենթ ու մենթ խորհողները խենթ ու մենթ խօսած ու շարժած աստեանին վտանգէն, որ բրածնուն վերջը գէշ ելլար նէ, Քավուռ գիրենք կ'ազատէր. հիմա այն ապաւինութիւնը կորսնցնելով, աւելի հլու թեամբ եւ հնազանգութեամբ անոր պատգամներուն հետեւիլ սկսան, եւ անոր գծած հետքէն անխտոր կ'երթան գէպ ի Հոսմ եւ Վենետիկ: Քավուռ Իտալիոյ այս երկու մասանցն ալ ազգը տիրացնելու միջոցներ տնօրիներ էր, եւ յաջողութեանն անկասկած ըլլալը իր վերջին շունչը տուած ատենն ալ կրկնեց, իր մահուան յաջորդող գէպերն ալ վկայեցին ստուգութիւնը: Նաբօլէոն, ինչպէս որ Քավուռի յաջորդը Պ. Ռիքաչօլի ազգային ժողովոյն յայտնեց, ազգն իր ըրած կորուստին վրայ սփոփելու համար, շուտով ճանչցաւ Իտալիոյ նոր թագաւորութիւնը եւ ինչպէս որ նոյնինքն Ռիքաչօլի հաւաստեց ազգին, Քավուռի տնօրինութեանցը ճշդիւ հետեւելով՝ Հոսմ մտնալու վրայ են: Վերջապէս Քավուռ մեռնելէն ետեւ, իր հողին դեռ կը հսկէ եւ կ'առաջնորդէ ազգին: Երախտագէտ ազգն ալ շնորհապարտ սրտիւ ճանչնալով անոր հաւճարոյն սքանչելիքը, Իտալիոյ ամէն դին իր երախտագիտութեանը վկաներ կը յարուցանէր կոր անոր անմահ եւ յաւիտենական յիշատակին: Ճենովա եւ Թուրին կրկին արձաններ կը ձուլեն կոր թուքանա, Ֆիրենցայի մէջ Մաւսոլէոն մը կառուցանել կ'ուզէ. Նէպոլիս, իր մեծ հրապարակներուն մէկը անոր անուանը նուիրեց, որուն միկակէտը պիտի զետեղէ անոր արձանը. եւ արձանին կերտուա-

ծոյն համար բացուած ստորագրութեան միայն առաջին օրը 25000 ֆրանք ժողուեր է : Մտտեանա, Փարիս, եւ Պապին ձեռքէն ելած բոլոր երկիրներն ալ մէյմէկ արձան ուխտեցին : Հոմայ եւ Վենետիկի ժողովուրդներն անոր արձաններուն համար ստորագրութիւն անձրեւեցին :

Թող Խալաթիք, որոնց համազգային բարերարութեւ պարծանք էր հանդուցեալը , այլ եւ Գաղղիոյ ազատական օրագիրներն ալ ստորագրութիւններ բացին անոր արձաններուն համար , եւ աւելին խորհելով առաջարկեցին որ անոր անունը մշտնջենաւորելէն զատ՝ լուսաւորեալ ազգաց մէջ հանապազ յեղյեղել տալու համար, անոր անուամբն յորջորջեալ գիտնականնոր հաստատութիւն մը սահմանուի : Եւ որ ամենէն զարմանազոյնն է, խրոխտ ու արհամարհոտ Անգլիան ալ , որ դեռ եւս Նեւտոնի համար ազգային յիշատակարան մը չէ ամբարձած , Հոնտրայի մէջ Քալուռի արձան մը կանդնելու առաջադրութիւնն ընելէն զատ, իտալական ստորագրութեանց համար ամէն կարգի եւ աստիճանի անձանց հանդանակաւ ժողովուած գումար մըն ալ , Հոնտրայի լորտ քաղաքացիութիւն ձեռօքն անցեալ շաբթու թուրին խրկուեցաւ : Քալուռի մահուան համբաւը Հոնտոա հասած ատենը , բաւլամէնթի մէջէն երեւե ի անձանց եւ նախարարաց արտասանած ներբողներն Անգլիոյ մէջ յաճախ պատահած բաներէն չէր :

Ի վերջոյ, բովանդակ ազատական եւրոպիոյ բժշկական եւ հասարակ օրագիրներն ալ , դեռ մինչեւ ցայսօր Քալուռի հիւանդութեան եւ զարմաններուն պարագայիցը վրայօք կը թըղթակեցին , կը վիճին եւ կը խորհրդածեն մորմոքելով : — Մեռնողներուն ամենոն համար արտասուք կայ եւ էն նուաստ գերեզմանին վրայ ալ տխրական ձայներ կը լսուին . բայց դիցազանց մահուանն ատենը , ամբողջ ազգեր եղերական նուագներ կ'երգեն , եւ նոյն իսկ յալթութիւնն անգամ արտասուք կը թափէ :

Իսկ օրինակի կաթօտ ժողովրդոց համար , Քալուռ իր բարուցը մէջն ալ իր հանճարոյն չափ մեծութիւն ունէր , եւ ըստ իս, մեծ մարդու մը մեծութեան կնիքն ու գրոշմը միշտ այս է : Քալուռ սիրելի էր ամենուն , վասնզի իր ազգին բարերարած սեղը , ամբարտաւանութեամբ չէր ծանրանար բարերարելոց սրբութիւն վրայ : Ինք գիտուն էր, գիտուն բառին

բովանդակ նշանակութեամբը , եւ Իտալիոյ փրկութեանն համար պէտք եղածն ամենէն աւելի գիտէր , բայց ուրիշներ ալ կային , որ թէպէտ գիտուն եւ արժանաւոր մարդիկ, բայց բանն անոր աչօքը չտեսնալով, լաւազոյնը գիտել կը կարծէին : Քալուռ կը թողուր , որ օրագրաց մէջ եւ ազգային բեմին վրայ գիտցանին խօսին քաղցրութեամբ կամ դառնութեամբ իր մէկ սուարկութիւնն անոնց օրերով երկնած խորհուրդը կը ջրէր, առանց ամբարձաւածելու , եւ առանց ընդդիմախօսները գծելու :

Ընդդիմականք , ինչպէս որ սահմանադրական ամեն պետութեանց ազգաժողովներուն մէջ հարկաւորաբար պիտի գտնուին , երբոր ժողովին մէջ Քալուռի գէմ հակաճառելու կը պատարաստուէին , գիտէին որու գէմ խօսելնին , եւ յուսալով կը խօսէին աւելի կամ նուազ եռանդեամբ եւ կրիւք : Քալուռ կը խօսէր եւ անմիջապէս վարկատուութիւնը կը սկսէր . անօթը բացուածին պէս , ոտխներն իրենց պարտութիւնը կը տեսնային , եւ սրամտելու կամ տխրելու փոխարէն , « Դարձեալ մեզ ծաղրըրաւ » կ'ըսէին խնդալով : Սովորելով պարտիկ եւ համոզուել , իրենց պարտութեանը վրայ գրիթէ կ'ուրախանային :

Քալուռ իր թեւին սակը ծնած ու ծլած ժողովականաց հետ իբրեւ ընդ մանկանց վարուելով , ինքն ալ միշտ զուարթ էր , եւ նրատած տեղն անգամ շարժման մէջ էր . ուրիշներուն խօսած ատենը , ինք զրասեղանին չուխան կը , երէր եղնդամբ կամ գմիլիովը կը խաղար , կամ քովիններուն հետ խնդալով կը խօսէր : Ամէն մարդ ալ անոր այս յարաշարժ կացութիւնը տեսնալով, « Քալուռ այսօր ուրախ է , կ'ըսէին , բաներն իս յաջող պիտի երթայ » : Եւ արդարեւ ազգային մեծամեծ իրաց յաջողուածոց օրերը , բոլոր քաղաքացիք կը գուշակէին անոր երեսէն , վասն զի, այն օրերը տուն երթալու ատենը , ամառ ձմեռ ձեռու ընկեր իրար շփելով կը քալէր արտօնօք :

Իր այս ընտանեկան վարմունքը ժողովուրդն իրեն անանկ ընտելացուցած էին , որ թուրինի բոլոր բնակիչները , մեծ ու պզտիկ , զինքը կ'ողջաւնէին փողոցի մէջ իրենց զէմն ելած ատենը :

Քաղաքացիք առ հասարակ , անիկայ իրենց իւրաքանչիւր զերգաստանաց իբրեւ սիրական անդամ նկատելով , մէջերնին անոր խօսքն

հղած առե՛նը «մեր Քաղաքը» կ'ըսէին, եւ հիւանդութեան ժամանակն անոր ողջունէն հարցուցած ասե՛ննին, «Բա՛րէ, կ'ըսէին, մեր Քաղաքիկը գէշ կ'երթայ կոր», ուստի եւ ըսլոր հիւանդութեան օրերը, գիշեր ցորեկ, հազարաւոր անձինք իր դրանն առջին ժողովուած, աղէկութեան լուր առնելու կը սպասէին :

Իտալիա ասանկ ազնուարարոյ հեղ եւ ընտելաւէր փրկիչ մը, վեհ եւ անդուգական փրկիչ մը կորանցուցած ասանը՝ Թուրինի կանայք առ հասարակ հանդիմանին փոխեցին, սեւ զգեցան, իր քաղաքական ոսոխներն անգամ չկրցին արցունքնին զսպել, եւ «Առմոնիա» լրագիրը որ եկեղեցականաց, այսինքն հոգևով մարմնով Քաղաքի թշնամեաց գործարանն էր, անոր մեռած գիշերին առտուն սա հատուածը գրեց, որ Քաղաքի փառաց անգին վկայութիւն մըն է .

«Քաղաքականի մասամբ, մեծանուն հանգուցելոյն հակառակորդ ըլլալով, քանի որ հզօր էր իշխանութեամբ, մենք ալ զօրութեամբ եւ ազատութեամբ մարտնչեցանք իր կարծեաց եւ վերպանաց դէմ: Բայց հիմայ, իր պաղեալ գիւակին վրայ, իր հոգւոյն անդուգական ձիւրքը միայն միտք կը բերենք, վասնզի պատմութեան կ'իյնայ անիկա դատել, եւ մեզի անոր վրայ արտասուել ու իր մահն ողբալ :

«Մենք շատ անգամ անոր բարի սրտին փորձն առած ենք: Վանքերուն գոցո ելէն եւ տեւ, Նիգուրիոյ մէջ մենաստան մը, միանձնուհիք անօթի կը սառապէին, մասնաւոր եղանակաւ մը իր գթութիւնն հայցեցինք, եւ ինքն ալ իսկոյն այն մենաստանին կուսանացն երկուհազար Ֆրանք զրկելէն զատ, մեզի ալ ինքնագիր երկար թուղթ մը գրեց, որ իր հոգւոյն ազնուականութիւնը կը յայտնէր: Մենք գիտենք նաեւ որ Թուրինի մէջ չքաւոր անձանց ողորմութիւն կը բաշխէր:

«Մենք իր արդարութեանն ալ շատ ապացոյցները տեսանք: Արքունական անձի մը ձեռքը հասցնելու համար՝ արքայիսկոպոսի մը աղերսագիրը մեզի յանձնուելով, մենք անիկա Քաղաքի կոմսին ուղղամտութեանը մատուցինք: Աղերսագիրը ո՛չ միայն տեղն հասաւ, այլ նաեւ, Քաղաքի կոմսին խնամովը հրատարակուեցաւ, թէպէտեւ անիկա իր գնացիցը վրայ դատաքնութիւն մըն էր: Անգամ մըն ալ համարձակեցանք իր քաղաքականութեանը դէմ

գրուած գրքի մը առաջին օրինակն ընծայել իրեն. ընդունեցաւ գիրքը, նազելի թուղթով մը մեզի շնորհակալ ըլլալով :

«Վերջապէս Քաղաքի կոմսին շնորհուն է որ Ս Պետրոսի դենարը հաւաքելու ազատութիւնը պարգեւեցաւ մեզի : »

Ահաւասիկ Քաղաքի, ահաւասիկ գործը՝ ահաւասիկ իր հայրենեաց եւ քաղաքակրթութեան մատուցած սպասները, ահաւասիկ կարօտեալ ազգաց համար ծնուցած յոյսերը, եւ ահաւասիկ մեր շնորհապարտութեան ալ իր վսեմական յիշատակին նուիրած զոյզն ուղերձը :

Խ. Պ. ՄԻՍԱԿԵԱՆ

18 Յուլիս 1861



Յրանասկան գրականութիւնը վերջերս կորուցուց իր աննեկ ինքնատիպ, աննեկն արի եւ ազնիւ դեմքերէն մին, Պետրոս Լազարը: Անահրաի յայտող թիւը պիտի պարտունակե ուսումնասիրութիւն մը այդ խոսիս ու խիզախ գրագետին վրայ. այսօր կը նրաստակեմք իր գեղեցկագոյն գրքին, Պահակներուն աննեկն նշանակալից հերեկն միայն քարոզակութիւնը:

ՈՂՁՍԿԻՉԸ

Հիւարիոն տրտում պատանի մըն էր. մեծ քաղաքի մը մէջ, խեղճուկ ու քաշուած թաղ մը կը բնակէր, ուր ամէնքը զինքը կը ճանչնային ու կը սիրէին վասնզի գեղեցիկ էր ու մեղամազձիկ: Բարձրահասակ ու նրբածեւ էր, դէմքը անփայլ ճերմակութիւն մ'ունէր՝ մեղմօրէն գեղնած, ինչպէս փղոսկր մը որ կը սկսի հիննալ, — դէմքը անոնց գոր իրենց սիրտը կը տանջէ: Աչքերը սեւ էին, լայն ճեղքուած եւ որոնց խորութիւնը կը զգացուէր, աչքեր որոնք էութեան ներսիցին կը դիտեն. իր թուխ մետաքսակերպ ու օղակաւոր մազերը վզին եւ ուսերուն վրայ կ'իյնային, եւ մանր ու ազնուագիծ բերանը կը մոպէր կ'իյներ՝ երբ իր բիբերը գէնոնք չէին գերած: Բայց Հիւարիոն անզգայ էր կ'իյներուն հրապոյրին. այնչափ կը սիրէր որ չէր կրնար ըզձալ, ու կարող չէր մէկ անձի վրայ սահմանափակել իր գորովը:

Իր հիւանդագին սէրը մինչեւ չափազանցութեան կը հասնէր, մինչեւ մանկականութիւն, մանկականութիւն մը որ զինքը մերթ կը մղէր

միջատի մը տատապանքէն ախտան զգածուելու որքան իր նմաններէն մէկուն ցաւն : Մարդոց ուրախութիւններն իրեն հաճոյք կը պատճառէին, բայց անոնց վիշտերը հեշտականորէն կը յուզէին զինքը : ուրիշներու տաճ. ցուիր սեանելով, գթութեան, գորովի եւ համակրութեան տաք կոհակներ իր կուրծքը կը մրրկէին եւ անհուն քաղցրութիւն մը կը զգար արցունք թափելու մէջ : Սակայն, լալէն անմիջապէս յետոյ անմկութիւն մը կը խեղդէր զինքը : վասնզի չէր գիտեր ի՞նչպէս ամօքէր իր ցաւերը :

Քանի մեծցաւ, այդ տարօրինակ հեշտութիւնը որ զինքը կը համակէր երբ էակի մը ատապիրէը կը տեսնէր՝ նուազեցաւ ու անհետացաւ : այլեւս չհասկցաւ արցունքներու քաղցրութիւնը, անոնց դառնութիւնը ճանչցաւ, եւ ատեն մը եկաւ որ ա՛լ իր մէջ ուրիշ բան չմնաց բայց եթէ տիեզերական սէրն անհուն եւ չարիքին հանդէպ իր անկարողութեան զգացուժը :

Երբ քառասուն տարեկան եղաւ, որոշեց ճամբորդել Սոսու մը թողուց այն տունն ուր ծնած էր, եւ մեկնեցաւ : Տարիներով՝ պտրտեցաւ աւանէ աւան, գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք : Զինքը տեսան ամէն տեղ ուր մարդկային արարածներ կը հեծեն : ալտոս խցիկներուն մէջ ուր կը խրին մարդկութեան խեղաներ, հանքերուն մէջ ուր ոլնայարերը կը կքին : գործարաններուն մէջ ուր զլուխները կը մազթափին, ուր աչքերը կ'այրին, ուր ախտները կը փառին, ուր ոտք ու ձեռք կ'անդամալուծուին, ուր մարմինը թոյներով կը վարակուի : աշխատանոցներուն մէջ ուր դեւաստի աղջիկներն ու սղաճարդիկ ախտաբեր գարշահոտութիւններէն կը քայքայուին, լեզի դոլորչիներէն կը կրծուին, ուր կուրծքերը կը փոսանան, թոքերը կը ծակին, սիրտը կը կաշանայ : մորթը կը թափի : արտերուն մէջ ուր աշխատաւորները ազան հողին դէմ կը մաքառին, ժանտ փոշիները հետը բերող հովէն ձողկուելով, ցօղեղեմներէն պատառուելով, արեւէն մաշուելով, անձրեւներէն փորուելով : խղիկներուն ու մանսարդներուն մէջ, ուր կը բնակին խոնարհները, ամսթահարներն ու ցաւածները : Ամենուրեք, Հիւարիոն տարաւ իր արամութիւնը, իր զութը, իր յուսահատութիւնն ու իր սէրը :

Իրիկուն մը, ամբողջ օրը անցընելէ յետոյ

զ տնավոր քարայրներու մէջ ուր հանքադործները տաժանելիօրէն կը հանէին աղը որուն դասն ընդհանրը իրենց վերնամաշկը կը խածնէին : Հիւարիոն նստաւ խրամի մը եզերքը եւ մեռնիլ փափաքեցաւ, որովհետեւ իր բաղուկները շատ տկար էին օդնելու : համար այն բոլոր ցաւերուն զոր տեսնը էր : Քանի մը ժամ այդպէս մնաց, ու ժաթափ ու հեծեճաղին : Ճամբուն վրայ ոտնաճայն մը լսեց յանկարծ, ու գլուխը վեր առաւ : Գիշերը պայծառ էր : տեսաւ մարդ մը որ կ'անդ տաւ իր առջեւ, ողջունեց եւ ըսաւ .

— Ո՛ւր կ'երթաս, Հիւարիոն :

Հիւարիոն պատասխանեց անոր թէ չէր գիտեր ուր կ'երթար : եւ այդ հարցումն իր հոգերն արծածելով, նորէն սկսաւ հեծկտալ : Այն ատեն, անցորդը մատովը ցոյց տուաւ հին դղեակ մը որ հեռուօր բլուրի մը կատարը կը ցցուէր, եւ,

— Գնա՛ հոն, հրամայեց : Երբ դղեակին առջեւ հասնիս, երկու անգամ դուռը զա՛րկ : Կիւրեղ ծերունին որ պահապանն է այդ դրան քեզի պիտի հարցնէ ով ըլլալդ : պիտի պատասխանես՝ «Ես կուգամ անոնց քովէն որ կուլան» : Դուռը պիտի բանայ եւ պիտի մտնես քո ցանկութեանց վայրին մէջ :

Այս ըսելով, օտարահանը զինքը նորէն ողջունեց, յետոյ ելաւ դնաց՝ առանց զլուխը ետին դարձնելու : Հիւարիոն ոտքի ելաւ, մէջքի գօտին պնդեց, ձեռքն առաւ ցուպը զոր նետեր էր, եւ ուղղուեցաւ դէպի վաղնջական դղեակը : Զայն իր գանուած տեղին մօտ կը կարծէր, բայց այդ հանդիպումէն յետոյ եկող չորրորդ վերջալոյսին է որ բլուրին սարահարթը հասաւ, եւ արեգակը արեւմուտքի մանուշակ ու նարնջադոյն մետաքսներուն ետին կ'անհետանար՝ երբ դուռը զարկաւ :

Դրան երկու թեւերը բացուեցան, ծերունի մ'երևցաւ, եւ Հիւարիոնը տեսնելով՝ հարցուց անոր

— Ո՞վ ես գուն որ դուռը կը զարնես :

— Ես կուգամ անոնց քովէն որ կուլան, պատասխանեց Հիւարիոն :

— Մտի՛ր ու եկո՛ւր անոնց քով որ կ'ուզին մեռնիլ, յարեց ծերունին : Ետեւէս եկո՛ւր, Հիւարիոն :

— Կուգա՛մ ետեւէդ :

— Աւետողը տեսա՞ր, հարցուց Կիւրեղ :

— Տեսայ, պատասխանեց Հիւարիոն :

Կիւրեղ ժպտեցաւ տրտմօրէն, եւ նշան ըրաւ անոր զոր ներս մտցուցած էր՝ որ իր քովէն քալէ ։ Նրկուքը մէկանց անցան պապ փորթիքներէ եւ ընդարձակ ամառի բակիրէ յետոյ վերջապէս դղեակին մէջ մտան ։ Անսահման կայան մըն էր՝ նիւ սրահներու բաժնուած, որոնք անձուկ անդատակներով իրարու կր կապուէին ։ այդ սրահներէն իւրաքանչիւրին մէջ կը բնակէր ամբոխ մը ցաւատանջ, բայց ժպտուն ։ եւ Հիւարիոն ճանչցաւ, հատ զիզուած մարդոց ղէմքերու ն վրայ, այն նոյն ցաւերը որոնք նկարուած էին ղէմքերուն վրայ անոնց որոնց մօտէն կուգար ։ բայց հոս՝ ցաւերը հանդարտ ու անխոռով էին ։ գուշակից որ կամովին ընդունուած ցաւեր էին ասոնք ։

Նրկու օր շարունակ, դղեակին մէջ թափանցան, եւ երբ երկրորդ օրուան վերջալոյսը եկաւ, Կիւրեղ Հիւարիոնը դուրս հանեց մօտաքի դրանը հակառակ կողմի դռնէն ։ Հիւարիոն կարծեց թէ իր առաջնորդը պիտի ձգէր զինքը ։ մեծ ազազակ մ'արձակեց, բոնեց զայն իր պատմուճակէն եւ ըտաւ անոր ։

— Մի՛ լքեր զիս իմ հոգիս ցաւով ու անձկութեամբ լեցուն է ։ Ինչո՞ւ անձանօթ անցորդը զիս քեզի զրկեց, եթէ հոս ալ ուրիշ բան չպիտի գտնէի բայց միայն տառապանք ու կսկիծ ։

— Որի՞է՛ վայրկեան մը, պատասխանեց ձերունին ։ Քեզի ըսի թէ կուգաս անոնց մօտ քր կը մեռնին, անոնց մօտ որ կամովին կը մեռնին ։ կ'ըսես թէ հոս գտար տառապանքներ հաւասար այն տառապանքներուն որոնց մէջէն կուգաս ։ Այո՛ ։ բայց այս տառապանքները յօժար սրտով յանձն առնուած, փնտուռուած են, եւ այն անձերը որ կը կրեն զանոնք, ինչպէս եւ անխուսափելի մահը, յանձն կ'առնեն զանոնք՝ թեթեւցնելու համար բեռը այն խեղճներուն զոր թռչուցիր հեռաւոր հովտին մէջ ։ Ասոնք երանելի աղջակէզներն են, անոնք քր ինքզինքնին կուտան՝ Չարիքը նուազեցնելու համար ։ »

Կիւրեղ լռեց ։ Որովհետեւ Հիւարիոն մըտածկոտ կը մնար, անշշուկ ներս քաշուեցաւ ու զուռը քօցեց ։ բայց յանկարծ Հիւարիոն նորէն գուռը ուժով մը զարկաւ եւ գոչեց ։

— Կիւրեղ, ընդունէ զիս անոնց մէջ որ մեռնիլ կ'ուզեն ։

Դուռը վերստին բացուեցաւ, Հիւարիոն մըտաւ դղեակին մէջ, եւ Կիւրեղի մօտ տեսաւ ։

աւետողը որ կը ժպտէր իրորուն հրճուանք մը թափանցեց իր էութիւնը, ղէմքը լուսավառեցաւ, եւ այնքան մեծ եղաւ իր ցնծութիւնը, որ չլսեց Կիւրեղին սա խօսքերը զոր ան ըսաւ իր ընկերոջը ։

— Չարիքը միշտ պիտի յաղթէ՞ ուրեմն ։ Ահա մէկ հատ մըն ալ որ կը մտնայ գեհեներն մէջ ։ Պէտք է ուրեմն որ յաւի ենաբար մարդոց ազնուագոյնները ոգի աբին, խոնարհները ազատելու համար վայրագ ճիւղաններն, կամ լոկ անոնց վերքերը դարմանելու համար ։ »

Աւետողը չպատասխանեց, բայց՝ բլրէն վար իջած ատեն՝ երբ այլ եւս Հիւարիոն զինքը չէր տեսներ, լացաւ ։

ՊԵՐՆԱՐ ԼԱՉԱՐ



Հ. ՊԱՐՈՆԵԱՆԻ ԳՐԻԵՐԸ

Տ. Վառմաշապուհ Գրիգորեան, Փարիզի Հայոց հոգեւոր հովիւը, տեղւոյս թաղական խորհրդին առաջարկութիւն մ'ըրած է, որ շատ բանաւոր ու գեղեցիկ կը թուի մեզի ։ առաջարկած է որ յանձնախուճք մը կազմուի որ հանգանակութեամբ յամար մը հաւաքէ, գնէ Հ. Պարոնեանի բազմաթիւ գրքերը, եւ զանոնք նուիրէ Փարիզի Հայոց եկեղեցիին, օրպէսզի անոնք հիմնաքարը կազմեն հայկական մատենադարանի մը որ կրնայ եւ պարտի օր մը հաստատուել Փարիզի մէջ (քրիստոս մը եւ զրպրոցի մը հետ որոնք օր մը չէ օր մը պիտի հիմնուին անշուշտ) ։ կը հրաւիրենք Փարիզի Հայերը յանձն առնել այն քիչ մը զոնորութիւնը որ հարկաւոր է Տ. Վառմաշապուհի առաջարկութիւնը կատարելու համար, որով՝ բացի հանրօգուտ նպատակի մը ծառայելէն՝ հանդուցեակին ընտանիքին ալ օգնութիւն մը ըրած պիտի ըլլան ։

ՏԻԿԻՆ ՍՎԱՃԵՍՆԻ ՆՈՐԱՎԷՊԵՐԸ

(Marie Sevadjan: Nouvelles, Traduites par Frédéric Macler)

Տիկին Մարի Սվաճեանի նորավէպները որոնք հրատարակուած են մեծ մասամբ՝ Պոլսոյ

«Հայրենիք»ին մէջ եւ երկու հատ ալ «Անահիտ»ին մէջ, մեր հասարակութեան կողմէն միշտ գտած են շատ համակրական ընդունելութիւն մը՝ իրենց բնական, կենդանի, պարզ ու վերս ոճովը, պատմութեամբ հակիրճ ու ինքնատուրպ ձևովը: Եւ զգացմանց եւրոպական նրբութեամբն ու վառվռունութեամբը: Պ. Փրեանտրիք Մաքլէր, ծանօթ հայագետը, այդ նորաձէպներէն ֆրանսերէնի թարգմանած է 15 հատ եւ հրատարակած է այս օրերս սիրուն հատորով մը:

Թարգմանութեամբ նորաձէպներն են՝ «Ապարանջանը», «Կելին», «Գուշակը», «Հին Հաւատք», «Հոլիաէյ», «Գտոր մը հացի համար», «Շլիցա Շլուխի», «Մանուշակի թաղարը», «Գրաւը», «Բարեկենդանի կատակ մը», «Սիթարը» (հրատարակուած «Հայրենիք»ի մէջ), «Թուքը» (հրատարակուած «Եր Կեանք»ի մէջ) եւ «Մահու արհաւիրք» ու «Խամսին» (հրատարակուած «Անահիտ»ի մէջ):

Պ. Մաքլէր գրացած է իր թարգմանութեան մէջ պակասակալ բնագրին ամբողջ շնորհն ու կենդանութիւնը: Կատար ենք որ այս հատորը սիրուն ընդունելութիւն մը պիտի գտնէ ֆրանսական հասարակութեան կողմէ: Կը յուսանք որ մեր ֆրանսագէտ գրասէրները իրենց համար մեծ հաճոյք մը պիտի նկատեն օրինակ մ'ունենալ այս հատորէն: Կենց ուզողները պէտք է գրին հետեւեալ հասցէին:

Société Nouvelle de Librairie et d'Édition, 17 rue Cujas, Paris.
Դինն է 2 ֆր. 50.

Մ Ե Ի Ե Ա Ր Ե Ա Ն Ե Ղ Բ Ա Յ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

«Հանդէս ամսօրեայ»ի հոկտեմբերի թիւին մէջ կը նկատենք յօդուած մը վրիննայի Մխիթարեան միաբանութեան այժմեան ատրուակալ Հ. Թոռնեանէն ստորագրուած, եւ որ կը յայտնէ ամենաազնիւ զգացումներ, ճիշդ այն զգացումները որոնց «Ոսկեղաբեան հայերէնի» առթիւ մեր յօդուածին մէջ փափաքած էինք օրերը տեսնել վրիննայի եւ վենետիկի Մխիթարեանց միջեւ: Կը շնորհաւորենք Հ. Թոռնեանը մեզի հետ միեւնոյն ժամանակ այդ բաղձանքը յայտնելու գեղեցիկ նախաձեռնութիւնն առած ըլլալուն, եւ հաճոյքով կ'արտասուենք այսուհի իր գրութիւնը:

Մանօթութիւն. — Գիտական նիւթերով վրայ անպակաս եղած են եւ պիտի ըլլան իրարու հակառակ տեսութիւններ: Վիճական գրութիւնք, (որոնցմէ հեռու ըլլալու են հակառակակէր ոգին եւ արձամարհոտ ոճը) կարեւոր են վեճի ենթարկուած նիւթը լուսաբանելու, եւ փոքր փոքր եզրակացութեան մը յանգելու յօգուտ դիտութեան:

Մտադրութեան արժանի է թէ ուսիսկան անձի մը գրութիւնն ունի մասնական յարգ, բայց հասարակութեան պատկանող անձի մը գրութիւնն կրնայ ստանալ բոլորական յարգ ու վարկ, մա'նաւանդ թէ նո'յն հասարակութեան organeին մէջ երեւի: Այս պատճառաւ, ծանր թերթերը մեծապէս զգուշաւոր են եւ չեն հրատարակեր այնպիսի գրութիւններ՝ որ կերպով մը կրնան համարուիլ լուծիչ եւ քակիչ բարի յարաբերութեանց: Վեհանձն մարզը ծանր աչք մը կ'արձակէ թէ՛ սոսկականի մը եւ թէ՛ հասարակութեան մը կողմանէ իրեն գէ՛մ հրատարակուած նսեմ գրութեանց եւ հեղնական ասացուածոց, եւ անոնց վրայ կը տարածէ քրիստոնէական անտեսութեան քողը: Յիբաւի շնել զիսնայն ունի յարգ ոսկոյ, — որ սիրոյ ոսկեզրնիկ աղերսն անվթար կը պահէ:

Գրութեանս նպատակն ու փափաքն է թերմացութեանց առաջն առնուլ, ուստի կը յայտնենք, թէ վարչութեան գլխոյն բացակայութեան միջոցին՝ առանց իւր գիտութեան Հանդեսի սեպտեմբերի քուոյն մեջ էջ 283 «Գեւ զատիպ տղեղութիւններ» վերնագրով խիստ պատասխան մը տրուած էր, որուն կձու ոճը (եւ թէ ուրիշ մէկուն այսպանող գրութիւնը) հասարակութեանս խաղաղասէր զգածմանց գէ՛մ են. — թէ եւ զժբազդաբար այն ալ ստոյգ է որ «Գեղունիին» մէկ յօդուածն Հանդեսից զիսն եւայն, ասոր առաջին զարկը սուաւ:

Անկեղծօրէն կը գնահատենք երկդարեան գիտնական եւ բաղձարդիւն վենետիկոյ Մխիթարեան Միաբանութեան յարգն ու վարկը, եւ իրաւամբ մեծ համարում կը վայելէ թէ՛ հայազգի եւ թէ՛ օտարազգի ժողովրդեան մէջ:

Վենետիոյ Մխիթարեանք եւ Վիեննայի Մխիթարեանք ո՞չ ապաքէն են Մեծի Մխիթարայ երկու բիւրջ աչաց . ուրեմն ո՞վ որ նա՛ եւ յանուգոյս եւ յանխորհուրդս զոչչի Լիկու բիւրեհն մեկուսն, անով իսկ կը վերաւորէ սեպնական ընկեր բիւրջ : Մեր բնութանն է, թէ համակիր եւ փոփոխակի յարգութեամբ (որ իրօք ալ պէտք է երեւի թէ՛ ի բանս եւ թէ՛ ի գրութեանն իւրաքանչիւրոց), երկու հայազգի համանուն, համարեն եւ համազարծան Մխիթարեան Միաբանութեանք, — որոնց իւրաքանչիւրն ունի զիւր շնորհս՝ ըստ շնորհնոյ Տիտուս, — պէտք են իրարու ձեռք կարկասել եւ օգնել իրրեւեզրայր եղբոր, որով կ'ըլլան քաղաք աւուր, եւ կը կարողանան գործել մեծամեծ յասպարիպի բարոյական եւ աշխարհական գիտութեանց եւ գրութեանց, նպատակաւ մեր հայ ազգին միտքն լուսաւորելու եւ սիրան ազնուացնելու ի փաստ Աստուծոյ :

Հ. թ ՈՒՆՆԵԱՆ



ՀԱՅԱՍՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Օր. Ալիս Սթոն Պլաքուէլ, հայասէր ամերիկացի ծանօթ գրագետուհին, մեզի զրկած է յայտագիրը «Հայաստանի բարեկամներ անունով նորահաստատ ընկերութեան մը որ հիմնուած է Ամերիկայի մէջ իր իսկ նախաձեռնութեամբ եւ որուն գլխաւոր նպատակն է հայ ազգին անցեալին ու ներկային վրայ տեղեկութիւններ հաղորդել ամերիկեան մամուլին եւ անոր ուշադրութիւնն ու համակրութիւնը գրաւել հայկական հարցին վրայ Պէտք չունինք բացատրելու օգտակարութիւնը այս պիտի ընկերութեան մը, եւ կը յուսանք որ հայ հասարակութիւնը ամէն ձեւով պիտի աջակցի այդ ընկերութեան գործունէութեանը :

Ահա թարգմանութիւնը «Հայաստանի բարեկամներ» ընկերութեան յայտագիր-կոչին :

«Friends of Armenia (Հայաստանի բարեկամներ) կոչուած ընկերութիւն մը հիմնուեցաւ այս օրերս Ամերիկայի մէջ : Իր նպատակն է

լուրեր եւ տեղեկութիւններ ցրուել ամերիկեան լրագիրներուն մէջ՝ հայկական խնդրոյն եւ Հայոց մասին : Ընկերութեան նախագահն է Տիկին Ճիւլիա Լեարա Հաուս, գեր-ն սխաղաներն են Մեծ. Պ. Սամուէլ Ճ. Պարօուս եւ ուրիշ մեծանուն անձեր : Եւ մամուլի յանձնախումբը պիտի ներկայացնեմ : Ընկերութեան բոլոր անգամները Ամերիկացի են : Ինչպէս անունէն կը տեսնուի, Հայաստանի բարեկամներու ընկերակցութիւն մըն է սախ :

«Այս ընկերակցութիւնը ի վիճակի է ամերիկեան մամուլին մէջ լուրեր եւ տեղեկութիւններ չըջարեցնելու : Լրջօրէն կը հրաւիրեմ բոլոր Հայերը որոնք կրնան խօսքիոյ, Ռուսիոյ եւ կամ սեւ է հայ գաղութի հայկական գործերուն մասին ամերիկեան հասարակութիւնը հետաքրքրելու բնութիւն ունեցող տղերմաններ ու իրողութիւններ հայթայթել մեր ընկերութեան, որ ինծի հաղորդեն այդ իրողութիւնները, որպէսզի կարենամ զանոնք ամերիկեան լրագիրներուն զրկել :

«Եթէ այդ լուրերը անգլիերէն կամ ֆրանսերէն լեզուով շարադրուած զրկուին ինծի, եւ անձամբ կրնամ կարգաւ զանոնք, եթէ սաճկերէն, հայերէն կամ ուսերէն լեզուով գրուած ըլլան, շատ մը հայ բարեկամներ ունիմ որ պիտի թարգմանեն : Կը խնդրեմ որ հոգ տանին լուրերը ստուգելէ յետոյ միայն զրկելու : Եթէ մենք զրկենք լուրեր եւ յետոյ անոնց անձիշտ ըլլալն հաստատուի, մեր ընկերութիւնը իր բոլոր վարկը կը կորսնցնէ :

«Կը խնդրեմ այն հայ թերթերու անօրէններէն որոնք կ'ուզեն մեր ջանքերուն աջակցիլ, որ ինծի զրկեն իրենց լուրերը եւ ընկերութիւններէն ու մասնաւոր անձերէն կը խնդրեմ ինծի հետ թղթակցութեան մտնել :

«Տեղեկութեանց ազբւրները գազանի պիտի պահուին, եթէ զանոնք հայթայթողն այդպէս ուզէ :

«Ընկերութեան օգտակարութիւնը ամբողջապէս կախում պիտի ունենայ այն գործակցութենէն զոր մեր հայ բարեկամները պիտի տան մեզի եւ այն օգնութենէն զոր մեզի պիտի ընծայեն լուրեր զրկելով :

Alice Stone Blackwell
45 Boutwell Avenue
Rochester, Mass. U. S. A.

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՀԱՅԵՐԸ



Աղեքսանդրիոյ մէջ հրատարակուող «Ազատ Բեմ» թերթին հետեւեալ յօդուածը, զոր կ'արտասուպեմ ամբողջապէս, երեւան կը բերէ ամենազգուելի եւ Հայութիւնը անպատուող իրութիւն մը:

«Կիրակի առտու հետաքրքիր բազմութիւն մը, Ալեքսանդրիայի եկեղեցիին պարտէզը ժողովուած, անհամբեր կը սպասէր տեսնելու համար ռուսական Գործակատար եւ Ընդհանուր Հիւպատոս Պ. Մաքսիմօֆի գալուստը:

Լուր տարածուած էր թէ Պ. Մաքսիմօֆ իմացած ըլլալով թէ տեղւոյս Հայերը հանրագիր մը պատրաստած են զոր միտք ունին իրեն յանձնել Վեհ. Զարին հասցնելու համար, փափաք յայտնած էր ինք անձամբ գալ Առաջնորդարան եւ այս առթիւ ճանչնալ Ալեքսանդրիոյ հայ գաղութին երեւելիներն ու ծանօթ անձերը:

«Ժամը տասնութ կին մօտ Հիւպատոսը եկաւ ընկերակցութեամբ Վեհ. Արարհամ փոշաբարթողի: Նախ եկեղեցին մտնելէ ու աղօթելէ ետքը զնաց Առաջնորդարան որուն բակին մէջ զինքը ընդունեցին Տ. Միքայէլ պէյ Ր. իղևան, Տ. Յ. Մութաֆօֆ, Տօք. Ժամկոչեան. Տօք. Սուճեան եւն. ու զինքը առաջնորդեցին ընդունելութեան դահլիճը:

«Հոն, երկու ժամի չափ, Պ. Մաքսիմօֆ խօսեցաւ, անպաշտօն հանդամանքով մը, Զարին ծանօթ Ուքաղին վրայ, Ահա՛ւասիկ Պ. Մաքսիմօֆի յայտարարութեան ամփոփումը:

«Վեհ. Զարը եւ նախարարները կալուածներու գրաւումը որոշած են երկար ու մանրակրկիտ քննութիւններէ ու խորհրդակցութիւններէ ետքը. հետեւաբար թեթեօրէն արուած որոշում մը չէ: Ռուսիոյ Հայերը պէտք է խոնարհին Ուքաղին առջեւ եւ ուրախութեամբ ու շնորհակալութեամբ ընդունին ամենաողորմած կայսեր հրամանը: Ռուսիա բացարձակ միապետութիւն մըն է, Զարը ինքնակալ մը որուն խօսքերը աստուածային պատգամներն: Ամենէն առաջ Վեհ. Կաթողիկոսը պէտք է խոնարհի Ուքաղին առջեւ որովհետեւ իբր Աթոռը ելած ատեն հաւատարմութեան եւ հըք

նազանդութեան ու խաւրած է առ Վեհ. Զարն:

«Պ. Մաքսիմօֆ շարունակեց ըսելով թէ՛ որ եւ է հանրագիր որ նպատակ ունի Զարէն խնդրելու որ Ռոքազը յետս կոչէ, անվայել ու անխորհուրդ ձեռնարկ մըն է, քանզի կը նշանակէ թէ նախարարները սխալու վնասակար խորհուրդ մը տուած են Զարին եւ թէ Զարը այնքան ապուշ գտնուած է որ չէ ըմբռնած իր նախարարներուն սխալ ու վնասակար խորհուրդը եւ զայն գործադրած է: Ասկէ զատ Հայերը երբեք ստացուածք չեն ունեցած. Ռուսիա երբեք իր գէմը Հայկական իշխանութիւն մը չէ ունեցած որմէ պատերազմով առած ըլլար երկիրն ու կալուածները: Ռուսիա կոիւներ չղած է Թուրքիոյ եւ Պարսկաստանի դէմ եւ անոնցմէ գրաւած է երկիրներ որոնց բնակիչներուն մէջ Հայեր պատուած են: Արդ ինչպէս որ գրաւուած երկիրներ Ռուսիա կը համարուին նմանապէս այդ երկիրներու բնակիչներն ալ պարզապէս Ռուսեր են եւ ո՛չ ուրիշ բան: Զարը գրաւելով Հայոց պատկանող կալուածները ցոյց կուտայ թէ՛ ամենաողորմածաբար խտրութիւն չզըններ Ռուսերուն եւ Հայերուն միջեւ, թէ հաւասար աչքով կը նայի մէնտեւ վրայ եւ թէ ասոր համար ո՛չ թէ բողոք՝ այլ շնորհակալութիւն եւ երախտագիրութիւն յայտնելու ենք իրեն:

«Պ. Մաքսիմօֆ անձնապէս ցաւ յատնեց արտասանմանի մէջ Զարին Ուքաղին առթիւ եւ զած ցոյցերուն եւ միթիւնկներուն համար եւ խօսքը մասնաւորելով ըսաւ թէ կիրակի օրուան միթիւնկին մէջ որոշուած հեռաղիւրդ որ ուղղուած էր Վեհ. Կաթողիկոսին, խիստ անպատշաճ կը նկատէր ինք. մանաւանդ օս բռնորդ թէ՛ «Ալեքսանդրիոյ Հայերը, եկեղեցւոյն մէջ համախմբուած, վստահ՝ որ Զարը Ս. Օծուութիւնն, ըստ Իւր աստուածաւանդ պարտակալութեան պաշտպան պիտի կանգնի եկեղեցւոյ դարաւոր իրաւասց եւն:» Պ. Մաքսիմօֆ այդ տողերուն մէջ ըմբոստացում կը տեսնէ Զարին ամենազօր կամքին գէմ, որ իրբեւ ամենազօր ինքնակալ իրաւունք ունի եղեր նոյնիսկ մեր կեանքը պահանջելու եւ մենք ալ պարտաւոր ենք եղեր զոհուանալութեամբ եւ նոյնիսկ հըրճուանքով մեր կեանքը զոհել ամենաողորմած Զարին հաճելի ըլլալու համար, ալ ո՛ւր մընաց մեր ապերախտութեան չափը երբ կելլենք բողոք կը բռնանք մեր եկեղեցիին պատկանած կալուածները գրաւելուն համար:

«Մեր գաղութին երեւելիներէն Տ. Միքայէլ

պէ՛յ Րէիզեան, որ միւս ունկնդիրներուն հետ մինչեւ այն ատեն խոր լսութիւն պահած էր, հարկ գատեց սփինքսային վիճակէն դուրս ելլել, դիտել տալու համար Պ. Հիւպատոսին թէ՛ եղածը սխալմունք մըն էր. թէ հեռագրին խմբագրութիւնը լաւ չէր եղած. թէ ներուձի կը հայցէր. թէ, թէ, թէ... Եւն, միայն թէ չըսաւ որ ի՛նչ կ'րպ շարացրուած պէտք էր ըլլար հեռագիրը. Այդ պակասը լրացուց Պ. Հիւպատոսը՝ աւելցնելով որ փոխանակ այդ ձեւով հեռագիր մ'ուղղելու, մեր պարտականութիւնն էր հեռագիր մը ուղղել Վեհ. կաթողիկոսին եւ հրաւիրել զինքը որ հնազանդի Վեհ. Զարին Ուքազին եւ ականջ չդնէ զինք դիմադրութեան մղող վնասակար խորհուրդներուն :

«Ատենը բաւական առաջացած ըլլալով, Պ. Մաքսիմոֆի անպաշտօն յայտարարութիւնը երկու ժամի շափ տեւած էր, ներկաները սկըսան կամաց կամաց դուրս ելլել, որով Պ. Ընդհանուր Հիւպատոսն ալ հրաժեշտ տանելով մեկնեցաւ ըսելով թէ ինք պատրաստ է տեղացի Հայերէն կազմուած պատգամաւորութիւն մը ընդունիլ եթէ ուզեն իրեն ներկայանալ :

«Այս յայտարարութեանը վրայ ներկաները Պոժե Զարիս խրակին պիտի երգէին, բայց զըժբաղդաբար ձայն ունեցողները մեկնած էին արդէն, իսկ Պատգոյնները բազաձայն էին :»

Այդ Մաքսիմոֆը, որ այս աներեւակայելի լրբութեան շեղջակոյտը յանդգներ է նետել Հայ հասարակութեան մը երեսին, այն անզգամի է որ Պոլսոյ Պանքայի ցոյցին ատեն, շնականօրէն խաբեց ցուցարարները՝ յանուն ուսկառավարութեան պաշտօնապէս յայտարարելով անոնց որ եթէ Պանքայէն ելլեն, բարենորոգումները պիտի գործադրուին Հայաստանի մէջ եւ Պոլսոյ մէջ ոչ մէկ ջարդ տեղի պիտի չունենայ, ու երբ՝ Փարեանին մահուամբն իրենց գլուխը կորոնցուցած ցուցարարները, հաւատք ընծայելով Ռուսիոյ ներկայացուցչին այդ յայտարարութեան՝ փութացին դուրս ելլել Պանքայէն ու Պոլսէն, տեսնուեցաւ թէ ի՛նչ ձեւով իրագործուեցան բարենորոգումները... 10,000 անգէն Հայեր երեք օր շարունակ չարաչար ջարդուեցան, եւ ատոր՝ հըրեշային անտարբերութեամբ մը՝ հանդիսատես եղաւ այդ նոյն Մաքսիմովը իր բոլոր պաշտօնակից գիւնապէտներուն հետ :

Ասիկա ի՛նչպէս կրնան մոռցած ըլլալ Աղեքսանդրիոյ Հայերը, որոնք մեծ մասամբ Պոլսեցիներ կամ Տաճկահայեր են. եւ ասիկա գիտնալէ յետոյ, ի՛նչպէս կ'երթան մտիկ ընել այդպիսի մարդու մը ու եւ յայտարարութիւնը. Ու մտիկ ընելէ յետոյ՝ ի՛նչպէս կ'ըլլայ որ այդ բոլոր Հայերուն մէջ մէկ հողի մը չէ գտնուեր որ անհրաժեշտ պատասխանը տար այդ անամօթ յայտարարութեան, գէթ դիտել տալով սա էական ու ամենապայծառ կէտը՝ թէ ուսկառավարութիւնը արեւելեան Հայաստանը զրուած ատեն՝ թէպէտ հայկական քաղաքական իշխանութիւն մը գոյութիւն չունէր բայց գոյութիւն ունէր հայ անկախ եկեղեցական իշխանութիւն մը, եւ ուսկառավարութիւնը «Պալատինիայով» ընդունած ու վաւերացուցած է է Հայ եկեղեցւոյն իրաւունքներուն՝ եւ մասնաւորապէս իր կալուածներուն սեփականութեան եւ վարչութեան իրաւունքին՝ պահպանումը : Ռուս կառավարութեան արդի երգմիտարութ վարմանքին հանդէպ Մաքսիմոֆի պէս լիտի կողմէն մը կրնայ Հայոցմէ շնորհակալութեան ուղերձներ պահանջել, բայց աններելի է որ զինքը ունկնդրող Հայերը իրենց զայրոյթը յայտնած չըլլան իրենց ազգային արժանապատուութիւնը գրեթէ հեզնաբար անարգող այդպիսի պահանջման մը դէմ. ունկնդիրներու մէկ մասին սրան ձգել դուրս ելլելը շատ տկար, շատ անպոյն ցոյց մըն է. այդ տկարութիւնը կը գոլանայ նոյն իսկ «Ազատ Բնմ» ի յօդուածին մէջ որ Հայութեան եղած այդ անարգանքին վրայ քանի մը ողորմելի կատակաբանութեան ուրիշ բան չէ գտած ըսելու. իսկ Րէիզեան պէյին զողահար փութկոտութիւնը ներուձ խնդրելու եւ Մաքսիմոֆի պահանջքին առջեւ երեսանկեալ երկրպագութեամբ խոնարհելու, կը հաստատէ պարզապէս թէ Ենիշերիներու կօշիկներուն փոշին թութուելու համար ամէն ատեն վրանին մասնաւոր թաշկինակ մը կրող մեր ողբալի նախահայրերուն ստրկական ոգին դեռ հեռու է մեր մէջէն անհետացած ըլլալէ...»

Մխիթարական է անունը որ Օրմանեան պատրիարքը՝ այս պարագային մէջ՝ կ'ունենայ վարժունք մը ճշմարտագէտ պատուարեր իրեն եւ ամբողջ հայ եկեղեցականութեան : Առանց հանրային կարծիքին կամ ո եւ է անձի ազգեցութենէն թելագրուելու : Ինքնաբերաբար՝ եւ ամենէն առաջ՝ ինքը հեռադրեց կաթողիկոսին , բողոքելով Ուքազին դէմ եւ կորովի ընթացք մը խնդրելով Հայրիկէն : Տաճկաստանի դիւստր կեդրոններուն եւ արտասահմանի բոլոր գաղութներուն զրկեց կոնստանտնուպոլիսիով զանոնք որ բողոքեն Ուքազին դէմ : Իսկ իր եւ խումբ մը բարձրաստիճան եկեղեցականներու կողմէն կաթողիկոսին զրկուած նամակը (որուն թարգմանութիւնը հրատարակեց «Արմէնի») եւ մանաւանդ Պոլսոյ ռուսական դեսպան Չինովիեֆին տուած իր յիշատակագիրը՝ հիանալի էջեր են , կորովի փաստալից , պայծառ ու վեհ ոճով մը գրուած , եւ սրունք պիտի մնան իբրեւ պատմական տորիւմաններ : Կը մալթենք որ միեւնոյն կորովն ու սաղանդը ցոյց աայ Օրմանեան այսուհետեւ՝ պաշտպանելու համար Տաճկահայոց իրաւունքներն ալ որոնք այլապէս ծանր հանգամանքներու մէջ կոխտուած են :

Արտասահմանի գաղութներէն ումանց մէջ միթիւնկներ տեղի կ'ունենան եւ կաթողիկոսին կը զրկուին հետադրեր խնդրելով որ հաստատ կենայ հայ եկեղեցւոյ իրաւունքները պաշտպանելու իր որոշումին մէջ : Ատի չի բաւեր սակայն : Այն կալուածները զոր կը գրաւէ ռուս կառավարութիւնը , կը վերաբերին ոչ միայն Ռուսիոյ Հայոց այլ բազմազան աշխարհի Հայոց : Արտասահմանի գաղութները պէտք է որ որոշապէս շողոքեն իրենց իրաւունքին յափշտակութեանը դէմ : Անդրիոյ եւ Ամերիկայի Հայերը մանաւանդ , որոնց մէջ անգլիական տակներ եւ ամերիկական կառավարութեանց դիմեն՝ խնդրելով որ իրենց բռնաբարուած իրաւունքներուն պաշտպան կանգնին

այդ կառավարութիւնները : «Լ'Եօրոփէէն» որ այս հարցին վերաբերեալ շարք մը նամակներ հրատարակեց (ու մանաւանդ Ա. Լըրուա Պօլիէօի հրաշալի յօդուածը) , այդ խնդրոյն միջազգային նկարագիրն ի վեր հանելով՝ անոր լուծումը Հանէի դատարանին յանձնելու անհրաժեշտութիւնը ցոյց տուաւ : մեր հայրենակիցները ջանալու են որ այդ գաղափարը , — զոր «Փրօ Արմենիա» եւս կ'երկրորդէ իր վերջին թիւին մէջ , — ամէն երկիրներու մամուլին մէջ արձագանք գտնէ : Այս բոլոր ճիգերը եթէ չյանգին ալ ո եւ է աստիճանով փոխել տալու Ուքազին որոշումները , Հայութեան բարոյական կորովը պիտի ապացուցանեն՝ աշխարհի առջեւ , եւ ատի միշտ շահ է , ու մեծ շահ է , որովհետեւ ինչ որ էական է ազգի մը համար , ինչ որ աւելի թանկագին է քան նոյն իսկ իր բոլոր կալուածները , իր հոգւոյն արիւթեանն ու անհախութեանը պահպանումն է :

Պայքարը կը շարունակուի կովկասի մէջ : Հայութիւնը հոն կը զիմադրէ դիւցազնաբար Ուքազին գործադրութեանը : Ամէն տեղ գըրաւման գործողութիւնը կատարելու եկող ռուս պաշտօնեաները իրենց դէմ կը դանին քարերով , ատրճանակներով զինուած հայ ամբոխներ , եւ խաղախներու , զինուորներու , ռուսիկաններու վաշտեր անոնց վրայ արձակելէ , կռիւներ մղելէ յետոյ միայն՝ կը յաջողին իրենց քաղական պաշտօնը կատարելու : Խանդավառութիւն մը՝ այլքան մեծ՝ արեւելեան Հայութեան մէջ տեսնուած չէր ռուսօպարիկ եւ ռուսօթուրք պատերազմներէն ի վեր , երբ — ո՞վ փոփոխութիւն ժամանակաց — հայ ժողովուրդը սուրբ սգեւորութեամբ մը եւ աղանիւ յոյսով մը բռն ամ՝ զէնք առաւ իր մանմետական բռնաւորներուն դէմ : Ռուսին մղած պայքարին օգնելու եւ իր աջակցութեամբը փութացուց անոր յաջողութիւնը : Պէտք է խոստովանիլ որ Տաճկահայոց պայքարին ժամանակ , արեւելեան Հայութիւնը չցուցուց ոգեւորութիւն մը այնքան բուռն ու միասնամուտ

որքան սպասելի էր եւ անհրաժեշտ, այնքան խորին եւ ուժեղ որքան այժմ ցոյց կուտայ. ոչ իրենց հարուստները տուին առանց որոյ մասն այն դրամին գոր կրնային աւել մեր որբերուն ու փախստականներուն օգնելու, մեր դատին աջակցելու, ոչ ալ իրենց երիտասարդութիւնը սուաւ այնքան կուտոյ՝ որքան կրնար ու պարտէր՝ օգնելու համար մեր պայքարին, որ ամբողջ Հայութեան ճակատագրը վճռելու բնութիւն ունեցող, եկեղեցապատկան հարցէն աւելի մեծ կարեւորութիւն ունեցող պայքարն էր եւ է միշտ թուրքութիւն մը, թմրութիւն մը կը տիրէր Ռուսահայ հասարակութեան մեծամասնութեան մէջ, հանդէպ ոչ միայն առճակատային դատին, այլ եւ հանդէպ իր ուրոյն ազգային շահերուն. զարգացեալ ու հարուստ գասակարգը ուսերէն կը խօսէր, հայ գրականութեան, թատրոնին կարեւորութիւն չէր տար. «Մշակ»ը, որ ամենէն տարածուած հայ թերթն է կովկասի մէջ, 3-4000 բաժանորդ միայն ունի մէկ ու կէս միլիոն հայ հասարակութեան մը մէջ, եւն, եւն:

Ուրազը ցնցեց արեւելեան Հայութիւնը, այնպիսի խորին եւ ուժեղ ցնցումով մը, որ անոր ազդեցութիւնը շատ տեւական պիտի ըլլայ եւ պիտի բերէ ազգային տեսակէտով շատ օգտակար արդիւնքներ: Այդ տեսակէտով, — որ սակայն ճիշդ հակասակն է Մաքսիմովի տեսակէտին. — թերեւս իրօք կարելի ըլլայ մինչեւ աստիճան մը շնորհակալ ըլլալ ռուս կառավարութեան՝ այդ Ուրազն արձակած ըլլալուն համար: Այդ Ուրազը, կը կրկնեմ, պիտի արգիլէ վերջնապէս արեւելեան Հայութեան ոռուսացումը:

«Վերածնութիւն»ը իր վերջին թիւերէն մէկուն մէջ կը հրատարակէ յօդուած մը ուր բացէ ի բաց կ'ըսէ թէ եկեղեցական կալուածներուն գրաւումը աւելի օգտակար է քան վրնասակար Հայութեան, որովհետեւ՝ ըստ իրեն՝ այդ կալուածները հայ կղերին ձեռքն ըլլալով, անոր միայն շահաբեր էին, ժողովրդի հետ ուր է օգուտ չունէին, եւ որովհետեւ հայ եկեղեցւոյն տկարացմամբը հայ ժողովուրդը այլեւս պիտի դադրի իր ազգային յոյութեան միակ խարխուր հայ եկեղեցին նը-

կատելէ, «կրօնական ազդութեան» ըմբռնումը պիտի թողու եւ աշխարհական ազդութեան մը յղացումը իւրացնելով ինքզինքը պիտի ջանայ պահպանել միմիայն քաղաքակրթական գէնքերով: Այս յօդուածին մէջ կայ մաս մը որ ճիշդ է, — այն թէ անցած է այն ատենը ուր Հայութիւնը իր ազգային գոյութեան «միակ» պահպանիչն իր եկեղեցին կը համարէր. եւ ես իսկ ատենով յայտնած եմ նոյն դադարը, որոշն առաջին արտայայտիչը Հայոց մէջ Գրբիգոր Արծրունին է եղած: Արգէն այսօր հայ ժողովրդին բաւական ստուար մէկ մասը ըմբռնած է թէ կարելի է Հայ միայն Հայ եկեղեցիէն ալ դուրս. կաթոլիկ, բողոքական կամ անհաւատ Հայերը այնքան Հայ են այսօր՝ ըստին ամբողջական նշանակութեամբ՝ որքան լոսաւորչական Հայերը. եւ ճիշդ է որ Հայութեան ապագան այնքան աւելի կ'ամրանայ որքան ազդութեան այս նոր ու ազատ ըմբռնումը տարածուի ու զօրանայ մեր մէջ: Բայց «տի չ'արդարացներ «Վերածնութեան» յօդուածին միւս գաղափարները. այո՛, հայ ժողովուրդը եկեղեցապատկան կալուածներուն ներկայացուցած շատ խոշոր հարստութիւնէն չէր տեսներ կարելի եղած «բոլոր» օգուտը, բայց թէ այդ հարստութիւնը միմիայն կղերին կը ծառայէր եւ բնաւ երբեք ժողովրդին, ատի աններելի զրպարտութիւն մըն է՝ մասնաւորապէս անապիւր երբ այս եղբրական վայրկեանին կ'արձակուի: Գէորգեան ճեմարանը, Ներսիսեան դպրանոցը, որոնք այդ կալուածներուն հասոյթովը կ'ապրէին, անուրանալի ծառայութիւններ մատուցած են ոռուսահայ հասարակութեան. ծխական դպրոցները վերծնէին անշուշտ թերութիւններէ, բայց վերջապէս հայ լեզուն ու պատմութիւնը կը սորվեցնէին կովկասի Հայոց նոր սերունդներուն, եւ ատի արհամարհելի մանրամասնութիւն մը ըլլալէ հետեւ է, էջմիածնայ միաբանութիւնը պորտաբոյժներէ միայն չէր բաղկացած. այս պահուս իսկ հոն կը գտնուին խումբ մը բանասէրներ եւ արուեստագէտներ որոնք Լոսաւորչի տունը Միխիլարի երկու տուներուն հաւասար փայլի մը հասցնելու վրայ էին: Աստե՛ք մեր ազգային գոյութիւնը պահ-

պահող միակ տարրը չէին, բայց այդ պահպանումին նպաստող կարևոր տարրերէն մին էին անոնց անհետացումը կամ ակարացումը՝ ինքնին՝ ոչ մէկ կերպով օգտակար չի երնար համարուիլ, որովհետև կարելի իսկ չէ հայ եկեղեցականութիւնը այսօր իր մի աշխարհական ոգով զարգացման խափանարար ու մի համարիլ մեր կզերը այլևս սկսած է իր ուրոյն սահմանին մէջ միայն գործել, աւանց բռնանալու աշխարհական գործունէութեան այ աջակցելով (պէտք չէ մոռնալ որ «հայկական խնդրոյն» հիմնարկութիւնը ամէն բանէ առաջ) Խրիմեան ու Վարժապետեան եկեղեցականներուն կը պարտինք) Ատանց միակ հիմնաքարն ըլլալու մեր ազգային դոյութեան (չկայ արդէն չէնք որ միակ հիմնաքար մ'ունենայ), Հայ եկեղեցին մին էր մեր ազգութեան հիմնաքարերէն, ասի կարելի չէ ուրանալ, այդ եկեղեցին մեր ազգային ինքնուրունութեան ամենէն կենդանի մնացորդներէն մին կը կազմէ աշխարհիս առջև, հաստատութիւն մը ալեւոր ու պատկառելի, իր ժողովրդական սիրուն ոգիով եւ իր պահպանման համար դարերէ ի վեր Հայոց թափած արիւնին հեղեղներովը նուիրական ու կրկնապէս գեղեցիկ դարձած եւ փեղեղեղական յարգանքի արժանացած, մարդկային բոլոր եկեղեցիներուն մէջ ամենէն պատուաւոր ու ինքնատիպ տեղերէն մին ընած, որ սակաւ եկեղեցիներ՝ օրինակի համար՝ շատ բարձր, Աստուք պէտք չէ մոռնալ, կարելի չէ մոռնալ, եւ ասոնք ըմբռնելու համար բնաւ երբեք անհրաժեշտ չէ հաւատացեալ ըլլալ, կը բաւէ պատմական տարրերու լուջ ըմբռնողութիւնն ունենալ, Յուզումը որ կը տիրէ այսօր բովանդակ Հայութեան մէջ, բողոքը որ կը բարձրանայ բոլոր Հայոց սրտէն, պայքարը զոր կը մղէ ամբողջ հայ ազգը (հաւատացեալ ու անհաւատ՝ ամէնք մէկ, եւ ես պիտի ուզէի որ կաթոլիկ ու բողոքական Հայերն ալ պէտք ցուակցութեան եզրայրական արասայայտութիւն մ'ընէին), այդ բոլորը զուտ կրօնական զգացումէ մը չի բղխիր, այլ ամէն բանէ առաջ մեր «ազգային» ինքնութեան ամենէն կարևոր

ուրուեղէն մէկուն սպաննացող վտանգին գիմարելու զգացումէն :
 Այդ զգացումը բոլորքուած այս աստիճան, պիտի յաջողի պահպանել թէ՛ հայ եկեղեցին՝ հակառակ բոլոր Ուքաղներուն, եւ թէ՛ Հայ ազգութիւնը՝ Դպրոցներու, եկեղեցիներու նութեական չէնքը, կայուններու շօշափելի հարստութիւնը չէ ազգութեան մը իրական պահպանողը, երբ ազգին սիրտը պաղած է ու թխած, ի՞նչ օգուտ ունին դպրոցին փայտն ու եկեղեցիին քարը : Այսուհետև արևելեան Հայք իրենց սրտին մէջ պիտի ունենան իրենց դպրոցն ու եկեղեցին ու ազգութիւնը, ու հոն ոչ մէկ ձեռք չի կրնար կործանել զանոնք : Արեւելեան Հայոքիւնը այլևս անկարելի է որ ուռնանայ, ասի անհերքելի է : Եւ ահա ինչու Ուքաղը կարելի է նկատել իրր ոչ բոլորովին վնասակար արարք մը :
 Այս չէ սակայն միակ օգուտը որ պիտի յառաջ գայ այդ համբաւաւոր Ուքաղէն : Այդ Ուքաղը յառաջ բերաւ արեւելեան Հայութեան մէջ բարոյական ուժեղ զարթում մը, միահամուռ ու ինքնազոհ կանգնում մը՝ անհասկան, հանրային, գաղափարական գործին համար, այդ հոսանքը պէտք է որ գործածուի — եւ պիտի գործածուի — հայ ազգութեան ամենէն էական, ամենէն վճռական գործին, տաճկահայ դատին լուծմանը : Վայրկեանը պատեհ է աուաւել քան երբեք : Նորանոր պարագաներ կը շեշտեն անոր նպաստաւոր ու բեղուն հանգամանքը : Անգլո-Ֆրանքո իտալական մերձեցումը այդ նոր պարագաներուն ամենէն կարևորն է, այդ մերձեցումը կարող է փրկարար ազգեցութիւն ունենալ Տաճկաստանի քրիստոնէից դատին համար : այդ երեք երկիրները՝ ձեռք ձեռքի տուած՝ կրնան շատ ուժեղ զեւ մը կատարել այդ դատին լուծումը արդար ու լուրջ ձեռով մը փութացնելու համար : Յրանսացի հայասէրներու ջանքերը իտալիոյ մէջ արծարծեցին մեծ համակրութիւն եւ գործելու փափաք մը ի նպաստ Արեւելքի քրիստոնէականներուն, եւ այժմ Անգլիոյ մէջ ալ Մալիեզոնիոյ ի նպաստ մեծազորոք միթիոնիկներ կը սարքուին, ու Հայոց կացութեան բարւոքման մասին ալ կը սկսին մտածել : Բայց այս բոլորէն սրայէսկի մեր դատը կարենայ լրջօրէն նգ-

տուելի, անհրաժեշտ է որ հայ ժողովուրդը իր պարտքը կատարէ, եւ իր պարտքը միթիւնկաներ սարգելու մէջ միայն չի կայսնար։ Ամէն ոք գիտէ այն մեծ կարեւորութիւնը որ ատջի օրէն տուած եւ միշտ կուտամ եւրոպական փրոփականտի դործին, որ Արեւելքի ստրուկ ազգութեանց փրկութեան մէջ ահագին դեր է կատարած միշտ, բայց միշտ մտածած եւ նաեւ թէ եւրոպական փրոփականտը միայն չի կրնար ազդ մը փրկել, երբ այդ ազգը չ'ընէր ինչ որ անհրաժեշտ է որպէսզի այդ փրոփականտը բեղմնաւորուի եւ վերջնական արդիւնքին յանդիւրէ ինչ է այդ պարտքը՝ զոր հայ ժողովուրդը ունի կատարելու, թէ ի՞նչ ձեւով, ի՞նչ յատակագիծի վրայ՝ պէտք է դայն կատարէ, զգացուցած եւ դայդ, — եւ ասի՝ «Անահիտ»ի հիմնարկուած օրէն մինչեւ այսօր անփոփոխօրէն Այդ հարկաւ որ ու կարելի ճիշդ — զոր Միսաքեան ալ նախատեսեր է իր սքանչելի «Քավուս»ին մէջ, զոր այս թիւով կը հրատարակէ «Անահիտ», — կարող է, — եւ այն միայն կարող է, — եւրոպական փրոփականտէն մեզի բերել այն օգուտը զոր կը սպասենք։ Առանց անոր, այս բոլոր փրոփականտը, մինչեւ հիմա կատարուած բոլոր ճիգերը, թափուած բոլոր զոհողութիւնները պիտի օգտակար ըլլան միայն Մակեդոնացուց, ինչպէս օգտակար եղան՝ երէկ՝ միայն կրեւտացուց, ու Տաճկահայոց՝ շատ շատ՝ քիչ մը հանգստութիւն, հալածանքներու դաղարում պիտի շնորհուի, այսինքն պիտի թոյլ տրուի որ վերադառնանք՝ նուազագոյն աստիճանով մը ինչ որ ունէինք Սուլթան Աղիլի օրով, եւ այդ չէ անշուշտ իտէալը որուն կը ձգտի մեր ազգը։

Ահա՛ բուն հարցը, միակ հարցը որուն վրայ պէտք է կեդրոնանայ չորս միլիոն Հայերուն միտքը այս պահուս։

Ա. Զ.

Յ. Կ. — Այս յօդուածս աւարտելէ յետոյ, Եգիպտոսէն ստացայ «Արշալոյս»ի վերջին թիւերն եւ La Reformeի մէջ հրատարակուած Փրանսերէն յօդուած մը՝ Մաքսիմովի խնդրոյն վրայ խօսող։ La Reformeին մէջ գրող Հայը, թէպէտ Ուքազին անարդարութիւնը ջանացած է ապացուցանել, բայց հարկ տեսած է նորէն՝ Մաքսիմովը շողոքորթել, զայն նկատելով անկեղծ

«հայասէր» մը որ իբր թէ, Կոլոյ մէջ միշտ Հայոց շահերը պաշտպանած է իզեր... Իսկ «Արշալոյս» յօդուածագիրը Մաքսիմովի անամօթ ճառը յիշելէն յետոյ, կ'ըսէ։

«Պ. Մաքսիմովի եղբակացուց որ վազ անցնին այդ խնդրագրէն ։ խոստացաւ որ ինքը Վին, Չարին պիտի գրէ եւ բացատրէ թէ, թէ, եւ Ս. զիպտոսի Հայերը ստանկ անխորհուրդ շարժում մը պիտի ընէին՝ բայց ինքը համոզած է որ եւ կենան Ներկայ շնորհակալութիւն յայտնեցին Պ. Մաքսիմովի տուած խորհուրդներուն համար եւ միեւնոյն պատիւներով զինքը ճամբու գլխին կարծիք յայտնուեցաւ յատուկ պատգամաւորութիւն մը յղել Գահիրէ, որպէս զի ժողովուրդը համոզէ միթիւնկէ եւ խնդրագրէ հրատարիլ...»

Եգիպտոսի Հայոց այս բնութեամբ ոչ միայն վատութեան անօրինակ ապացուցումներն է, այլ եւ գերազանց «ապուշութեան» ։ Մեզ կոխտողներուն ստեղծած զարեւով համբուրած ըլլալուս համար է որ տիեզերական արհամարհանքի արժանացած ենք, այդ հին ստրկական քաղաքականութիւնը վերջացած կը կարծէինք, Եգիպտոսի Հայերը ցոյց կուտան թէ վերջացած չէ ան։ Մաքսիմովը «հայասէր» նկատելու համար Հայ մը խենթեցած ըլլալու է պարզապէս Մաքսիմովը ուրիշ բան չէ սերած երբեք բայց եթէ իր քաղցրեւ իր կաւալարութեան զուտ ուսական ջաները, ԳՏին երբ Հայերը Կոլոյ կկեղեցիներուն մէջ հաւաքուած էին՝ ցոյցի մը համար, Մաքսիմով կկաւ խաբեց զանոնք, մղեց դուրս ելլելու, խոստանալով որ եթէ դուրս ելլէին՝ հայկական դատը պիտի շահէր ատով եւ թէ իրենց եւ ոչ մէկը չպիտի ձերբակալուէր դուրս ելլողները բոլորն ալ ձերբակալուեցան, հայկական դատը ոչինչ չահեցաւ, ու Մաքսիմով այդ ծառայութեան համար անշուշտ վարձատրուեցաւ իր կառավարութենէն ։ Վանքային ցոյցին ատեն այդ նոյն Մաքսիմովը խաբեց ցուցարարները, վիժեցուց անոնց ա՛յնքան յանդգնութեամբ ու զոհողութեամբ սարքուած ցոյցը, ու ցուցարարներուն մեկնելէն յետոյ՝ ոչինչ բրաւ գոնէ ցարդերը արդիւելու համար, շատացաւ ընդունելով Օսմանեան պանքային երախտագլտութեան շօշափելի ապացոյցը իր մատուցած ծառայութեանը համար ։ Հիմակ ալ իր նպատակն է՝ յայտնապէս՝ Եգիպտոսի Հայերը ծուղակը ձգելով վարձատրուել իր կառավարութենէն ։ Հայոց շահը ու եւ զեր չէ երբեք ունեցած եւ չունի այդ մարդուն մտահոգութիւններուն մէջ ։ Այսպէս վարուելով Եգիպտոսի Հայերը դաւաճանած կ'ըլլան ազգային շահերուն դէմ, արհամարելի եւ ծիծաղելի կ'ընեն Հայութիւնը յայտ օտարներուն ։ Կը յուսամ որ պիտի նշմարեն գործուած սխալը, եւ պիտի փութան դարմանել դայն ։

ՏՊԱՐԱՆ „ԱՆԱՀԻՏ”

22 RUE CLAUZEL, PARIS

Կը տպագրուին, խնամքով եւ մատչելի գներով, հայերէն ու ֆրանսերէն զրօքեր, զրօքչկներ, գեղարուեստական հրատարակութիւններ, յայտագրեր, հրաւիրագրեր, այցաքարտեր, ծանուցումներ, եւն, եւն :

«ՏՊԱՐԱՆ ԱՆԱՀԻՏ» պիտի շարունակէ «Մասենադարան Անահիտ»ի շարքը, պիտի սկսէ գեղարուեստական հրատարակութեանը նոր շարք մը: Եւ պիտի շարունակէ նմանապէս «Անահիտի հրատարակութիւններ»ը, որոնց առաջինը «Նահապետ Գուշակի Դիւան»ը մեծ համակրութեամբ ընդունուեցաւ հայ հասարակութենէն :

«Անահիտի հրատարակութեան» ամենէն մտակալ թիւերը պիտի ըլլան՝

1. ԷՍՄԷՐ ԽԱՅԵԱՍԻ ԲԱՆԵԱԿՆԵՐԸ, Թարգմանութիւն Գ. ՓԱՌՆԱԿԻ
2. ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿՊԱՇԼԵԱՆԻ ԿԵԱՆԲԵ ՈՒ ԳՈՐԾԸ, ուսումնասիրութիւն ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆԻ
3. ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿՊԱՇԼԵԱՆԻ ՎԵՐԹՈՒԱՄԵՐՆ ՈՒ ՃԱՌԵՐԸ, (Բ. տպագրութիւն):
4. ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿՊԱՇԼԵԱՆԻ ԹԱՏՐԵՐԳՈՒՆԻՆԵՐԸ, (Բ. տպագրութիւն):

Բացուած է բաժանորդագրութիւն ՊեշիկՊաշեանի կենսագրութիւնն եւ քերթումներն ու ճառերը պարունակող երկու հատորներուն համար: Երկու հատորը պիտի արժեն բաժանորդագրողներուն համար՝ հինգ ֆրանք, իսկ տպագրութենէն յետոյ՝ վեց ֆրանք: Բաժանորդագրուիլ ցանկացողներէն կը խնդրենք այժմէն զրկել նշանակուած գումարը (5 ֆրանք), որպէս զի բաւայնմ որոշենք տպագրութեան օրինակներու թիւը:

Կը խնդրուի «Տպարան Անահիտ»ի գործադրութեան վերաբերեալ ամէն նամակ զրկել տպարանի հասցէին, իսկ «Անահիտ» ամսաթիւերին, «Հրատարակութիւնք Անահիտ»ին եւ եւ «Մասենադարան Անահիտ»ին վերաբերեալ ամէն նամակ զրկել խմբագրութեան մշտական հասցէին:

POÈMES ARMÉNIENS, ANCIENS ET MODERNES

TRADUIT PAR
A. TCHOBANIAN
ET PRÉCÉDÉS D'UNE ÉTUDE DE
GABRIEL MOUREY

Գին, փափաքողները պէտք է գիմեն հետեւեալ հասցէին .

Librairie A. Charles. 8 Rue Monsieur le Prince, PARIS

Գին 2 Ֆր.

ԱՂԱՋՏԻ ԲԱԺԱՆՈՐԴՈՂԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անահիւր Կը հրատարակուի ամիսը անգամ մը :
 Բաժանորդագիրն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ),
 2 տուար (Ամերիկա), 5 ռուպլի (Ռուսիա) :
 Վեցամսեայ՝ 5 ֆր. (Ֆրանսա), 6 ֆր. (օտար երկիրներ), 1 տու. (Ամերիկա), 3 ռպլ. (Ռուսիա) :

Յօգուած եւ բաժանորդագիրն զրգել հետևեալ հասցէին

A. TCHOBANIAN

17. RUE LA BRUYERE

PARIS

«ԱՆԱՋՏ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Թիֆլիս . —	Պարոն Գալստեան (Գուտտենբերգ գրավաճառանոց)
Պաքու —	» Ա. Մ. Ծոցիկեան
Դալքէժ . —	» Մկրտում Սահակեան
Նիւ-Եօրք . —	» Պետրոս Գարրիէլեան
Իսթ Ուոթըրթաուն . »	Կ. Մալխասեան
Ուոթըր . —	» Ա. Յովսեփեան
Զիքալի . —	» Ա. Քարախալուբեան
Պրսիոն . —	» Արամ Ասքանազ
Փրովիտէնս . —	» Օ. Տիրատուբեան